

ՊԱՐՈՒՅՔ ԱՌԻՈՒԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԸՅԵՐԵՆ
ԱՐԶԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

П. М. МУРАДЯН

ГРУЗИНСКАЯ ЭПИГРАФИКА
АРМЕНИИ



ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ
ИССЛЕДОВАНИЕ



Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԸԱՅԵՐԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՂԵՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ
ԲՆՆՈՒԹՅՈՒՆ



Անխառնության մեջ հավաքված, վերձանված ու բննության
ևն անված Հայաստանի տարածքում պահպանված բոլոր
հին վրացերեն արձանագրությունները: Վիճագիր ու մասն-
նագրական աշխատույն անգլիկոսությունների համադրությամբ
բացահայտված է այդ արձանագրությունների աղբյուրագի-
տական արժեքը՝ երկրի ԺԱ—ԺԳ դարերի օտարա-տեսակա-
կան, քաղաքական ու մշակութային պատմության համար:
Ցրբում վերանայված ու նշգրտված են հիշյալ դարերի
հայոց և վրաց պատմության ու մասնագրության մի շարք
կարևոր էջեր:

Առաջարկվող մեկնադրությունը նախատեսվում է պատ-
մաբանների, բանասերների և կրթվածագրությամբ հետա-
քրքրվող լայն շրջանների համար:

Մ 10602—1 25—70
704(02)—77

© Երևանի համալսարանի
հրատարակչություն, 1977

Հ Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(Նամակի ցանկ)

Երևան—1977

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կրթկասագիտության զարգացման արդի վիճակում հայկական և վրացա-
կան մատենագրական աղբյուրները հեռու են անցյալի քաղաքական,
տնտեսական ու մշակութային պատմության առաջագրած բոլոր խնդիրներին
գոհացուցիչ պատասխան տալու կարողությունից: Եթե անգամ դանց առնենք
միջնադարյան պատմիչների՝ եկեղեցու սպասավոր լինելու, հասարակական
կյանքի ոչ բոլոր կողմերը նույն տեղակայությամբ ու մանրամասնությամբ
ներկայացնելու և տեղայնության ու ավանդակնության պարագաները,
այս պատմագրական երկերի շղթայական հաջորդականության պակասն
ինքնին ստիպում է դիմել օժանդակ աղբյուրներին՝ մերթ այդ ընդհատումները
լրացնելու, իսկ հաճախ էլ առկա նյութի օտուցությամբ վերահասու լինելու,
այն մանրամասնելու համար: Միջնադարի վերաբերմամբ այլաբնույթ
աղբյուրների ուսումնասիրությունն ու մատենաշարային հրատարակությունը
միայն մասամբ են լրացնում այդ բացը, այն էլ գերազանցապես քաղաքա-
կան-եկեղեցական պատմության հարցերում: Ուստի լիովին հասկանալի է
այն հույսը, որ սրբագրված, որ ցուցարկված է հազարավոր ձեռագրական
հիշատակարանների, «մանր» համարված ժամանակագրությունների, ոչ
զուտ պատմական նյութերի երևան հանելու և հրատարակելու գործին:
Հայկական միջնադարյան վավերագրերի ընտրությունից անկախված տեղե-
կությունները շատ շքեղ, որովհետև փաստաթղթերի աննշան մասն է միայն
պահպանվել, այն էլ, ըստ մեծի մասին՝ ուղ դարերի և կամ գրագրերից ոչ
պակաս հետագա ընդօրինակություններով ու միջամտություններով: Ակադ.
ժ. Օրբելու արդարացի գիտությունները «...թագավորական հրովարտակները,
կաթողիկոսական կոնդակները, գանազան հրամանագրերն ու որոշումները,
կաթողիկոսական փաստագրերը, պայմանագրերը, կալվածագրերը և այլն
կամ ընդ հասել մեզ, կամ հասել են ոչ թե ձեռագրերի ձևով, այլ իրեն
քարերի վրա փորագրված արձանագրություններ»: Վերջիններս կշիռը
պատկերացնելու համար թվարկածին պիտի ավելացնել շինարարական,

1 Հ. Օրբելի, Հայկական վիճակի արձանագրությունների գիտական նշանակությունը,
«Իրական հայ վիճակագրություն», պրակ 1, Երևան, 1966, էջ VI:

միտմանական, հիշատակադրային ու տապանագրային արձանագրությունները:

Ի տարբերություն մատենագրական-ձեռագրական աղբյուրների, արձանագրությունները գրեթե զերծ են ընդօրինակության միջոցին սխալագրությունների ներառելու, ընդմիջարձկելու վտանգից, խմբագրվել-սրբագրվելու հնարավորությունից և այլն, իսկ այդ ամենը նրանց բովանդակության հանդեպ առավել վստահություն է նրաշնամբում: Երկրորդական իրողություն չէ նաև վիճակի հուշարձանների անմիջական ու անխեղելի անշուրթյունը իրենց գտնված տեղին՝ սկսած ավելի բնակավայրից մինչև դամբան ու երկիրը:

Գիտելու է, որ ձեռագրական հիշատակարան-հիշատակագրությունների պես վիճակի արձանագրություններն էլ գրառվում են անցուղարձի, պատմվող իրողության անմիջական ազդեցության տակ, հաճախ իբրև նրա ուղղակի արդյունք, միշտ փաստական բովանդակություն ունենալով: Որքան էլ դրանց հազորգամ տեղեկությունները փոքր լինեն, հաճախ նույնիսկ մասնավոր, հետազոտող նրանցով ալլազան ստուգումների ու համադրությունների հնարավորություն է ստանում, ազատ՝ զեպերեն ու իրադարձությունների նարատելու, որոշակի նախասիրությամբ ու մտայնությամբ ներկայացնելու պատմիչի կանխակալություններից: Սակայն մատենագրական երկերի ուսումնասիրությունը, վիճակագրության համեմատությամբ, ունի որոշ գյուրություններ. ձեռագրական այլընթերցումների բազմաթիվությամբ կարելի է լրացնել կամ վերահանդենլ ավելալ զրչագրում պակասող բառը կամ նույնիսկ հասվածք, մինչդեռ վիճագրության մեջ նույնական տերտեր ու սարքներցումներ չկան (խոսքը բազմալեզվյան արձանագրություններին չի վերաբերում), ուստի ինչը հողմնահարվել ու ժամանակի ընթացքում կործանվել է՝ գիտության համար կորել է ամոխշու: Այստեղ վերահանդումները հնարավոր են առանձին տառեր-տառաշարքերի ու բառեր-բառակապակցությունների սահմաններում, այն էլ առ այդ վստահելի կովաններ ու տեղադրելի տարածք ունենալու պայմանով:

Ի վերջու, ոչ երկրորդական կարգի տարբերություններից մեկն էլ վերաբերում է հուշարձանների լեզվին: Անկախ քաղաքական վերաբերումներից, պատմիչի մտայնությունից ու ժամանակի «անզեղ» լինելուց, մատենագրական երկը գրվում է հեղինակի ու երկրի մայրենի լեզվով, մինչդեռ վիճագիր արձանագրությունների լեզուն հաճախ թեկազրված է ոչ այնպիսի հրապարակման միջավայրին հասկանալի լինելով, որքան այն վիճագրելի ավողի քաղաքական, դավանական պատկանելությամբ և կամ այն նպատակադրումով, որ հետապնդում է նրա իրական հեղինակը: Այդ ամենին զումարելի է նույն միջավայրում այլալեզու էթնիկական միավորումների սակայնության պարագան: Ահա այս գործոնների ազդեցությամբ է, որ միջնադարում գիր ու գրություն շունեցող Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ու էթնիկական միավորումների մտ կարելի է շուրջ մեկ տասնյակի հասնող լեզուներով արձանագրություններ գտնել, երբ նրանցից և ոչ մեկը

տեղաբնիկ համար մայրենի չէ: Այսպես, օրինակ, Հյուսիսային Կովկասի վիճագրությունը ներկայացված է հետևյալ լեզուներով՝ հունարեն, լատիներեն, երբայրեն, պահլավերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, հայերեն, վրացերեն, ուշ շրջանում՝ նաև արաբատառ կամ վրացատառ տեղական մեկ-երկու լեզվով: Հիշյալ լեզուներով գրված լինելու փաստն ինքնին արտացոլում է տեղիս քաղաքական իշխանության և ազդեցության հազորգականությունը, դավանական պատկանելությունը, զրսեկ էթնիկական միավորների բնակավայրերի գոյությունը, մշակութային ազդեցության ոլորտը և շատ այլ իրողություններ: Այդ խառնադեպության մեջ, ինչ խոսք, նշանակալի է և միասնական լեզվի ու գրի-գրչության շրջության պարագան, բայց վճռականն այդ չէ, այլ այն հանգամանքները, որոնց թեկադրությամբ կատարվել է լեզվի քնարությունը:

Հայաստանն ու Վրաստանը դարավոր գիր ու գրականություն, գրավելու ժողովուրդներ ունեցող երկրներ են, բայց այստեղ էլ բիշ լեն վիճական հուշարձանների բազմալեզվայնության փաստերը: Վրաստանում պատկանելի բանակությամբ վրացերեն արձանագրությունների կողքին, որոնց ուսումնասիրման ու հրատարակման գրծում մեծ է Մ. Բրտսեի, Ն. Մառի, Ն. Քաղաշվիլու, Գ. Բացրաձեի, Իվ. Զալախիշվիլու, Ա. Շանիձեի, Ն. Քերձեիշվիլու, Ք. Բարնավելու և այլոց վաստակը, նշանակալի թիվ են կազմում հունարեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն, եբրայերեն և մի քանի այլ լեզուներով գրված վիճագրերը: Նույն իրողությունն է և Հայաստանում, որ շուրջ տաս հազար հայերեն արձանագրություններին դամբվում են թվարկած բուրբ լեզուներով եղածները:

Հնարավոր է, որ Հայաստանում, Վրաստանում կամ Հյուսիսային Կովկասում ապրել ու ստեղծագործել են հույն, ասորի, պարսիկ, արաբ, թուրք և այլազգի մատենագիրներ, բայց նրանց թողած գրավոր ժառանգությունը բիշ է անշլում այդ երկրների պատմությանն ու մշակույթին՝ հիմնականում մնալով երկի լեզուն կրող ժողովրդի սեփականության, մինչդեռ այդպես չէ վիճագրության վերաբերմամբ: Վերջուս երկուսի նշանակություն ունի, անկախ լեզվից, բովանդակած նյութի կարևոր-անկարևոր լինելուց, այն անմիջական աղերս ունի գտնված տեղի՝ երկրի կամ դավառի պատմության հետ, որ հանգամանքների բերումով արձանագրվել է և ապավայրում հուշարձանը չի դադարում այն երկրի պատմությանն ու մշակույթին անընկճելուց, որի լեզվով գրված է Հիշյալ առումով հատկանշական է Վրաստանի արաբերեն արձանագրություններին վերաբերող ակադ. Գ. Մերթելու զնահատությունը. «Ըստ էության սրանք վրացական հուշարձաններ են, արաբերեն լեզվով ներկայացված, այնպես, ինչպես վրացական են Գիմիտրե արքայի, Թամարի, Լաշա-Գիրգիի, Ռուսուզանի և այլոց գրամները՝

՝ Արաբատառ արձանագրությունների համահավաք հրատարակություն տե՛ս «Эпиграфические памятники Северного Кавказа на арабской, персидском и турецком языках», тексты, переводы, комментарии, введение и приложения Л. И. Лаврова, М., т. 1, 966, 4. II, 1968.

ապա արարեր են մակագրություններով, որոնց մեջ տրված են բրիտանյա Արևելքի այն ժամանակվա ուժեղագույն պետություններից մեկի թագավորների տիրույթները՝ արարել բոլոր նման գրամների արձանագրություններից: Այդ պատճառով այս հուշարձանները պետք է վրացական հուշարձան համարենք, ակնարկ նրանից, որ արարերն լեզվով են գրված: Քննենա այստեղ վերապահելի կետեր կան, բայց հիմնականն ու ընդունելին այն է, որ Վրաստանում գտնվող այլալեզու արձանագրությունները վրացերեններին հավասար չափով վերարեում են տվյալ երկրի պատմությանն ու մշակույթին, ուստի նրանց ուսումնասիրության գործում առաջին հերթին շահագրգռված են վրացագետները: Վերջին տասնամյակներում կատարված ուսումնասիրություն-հրատարակումները լիովին արգասաբերին այդ հարցադրումը. պրոֆ. Բ. Ղաուխիշվիլին ծավալուն մեկագրություն արված ի մի հավաքեց, վերձանեց, թարգմանեց ու աղբյուրաբանական քննություն ենթարկեց Վրաստանում պահպանված հունարեն արձանագրությունները*, Յ. Կախիանին առանձին գիրք նվիրեց Գրեմերի արարերն արձանագրությունների՝, Ն. Բաբալիշվիլին կազմել է երբայեւմ արձանագրությունների դիմված, իսկ պրոֆ. Լ. Մեխրաբե-Քենը տասնամյակներ շարունակ հետազոտել է Վրաստանի սահմաններում եղած հայերեն արձանագրությունների հավաքմանն ու վերծանումը, որ նա ամփոփեց շուրջ քսան տարի առաջ ավարտած ու Հայաստանի ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտին ի տպագրություն հանձնած դիմանով: Փաստորեն՝ Վրաստանում պահպանված այլալեզու արձանագրությունների ուսումնասիրության ու հրատարակման աշխատանքն ավելի մոտ է իր լիակատար ավարտին, քան թող այդ զորմանալի լիվա, վրացերեն վիճագրերը: Իրերի նման վիճակը, ինչ խոսք, թելադրված է վերջիններս բաղմաբանականությամբ. այլևս ամբողջությամբ նրանց նշանակալի մասի հրատարակված լինելով, թեև դա ամենին չպիտի դանդաղեցնի սպասելի հատորավոր դիմանների հրատարակությունը:

Ամփոփելով 1933 թ. Ջավախքում կատարած վիճագրական գիտարշավի արդյունքները, ակադ. Ն. Բեքվեճիշվիլին կերպակցում էր. «Նշված հարցը (իմա՝ վիճագրերի հավաքումն ու հրատարակումը — Ա. Մ.) երկար ժամանակ վրաց գիտական շրջանների մտահոգության առարկան է: Այս

գործը մի քանի անգամ ձեռնարկվեց էլ, բայց ձեռնարկման անարդյունք լինելը անհետողականությունը է բացատրվում... Մի ժամանակ այլ շատագրորների մեջ սա բուրբեց ավելի անհետաձգելին է: Ուշանալ-ես մնալու տխուր հետեանքը այստեղ ամենից ակնառու է. ավերված ու գիտության համար ընդմիջ կորած են բազմաթիվ հնագույն արձանագրություններ և, որ ավելի ողբալի է, այսօր մեր աչքի առաջ մեծ արագության ավերվում ու կործանվում է այն, ինչը ցարդ գիմացել է ժամանակների հուճերին: Այսպիսի պայմաններում մեր գիտական շրջանների պարտականությունն ու պատասխանատվությունը մեծ է ու լուրջ: Ժամանակը այլևս չի համբերում. այս մեծ գործը անհետաձգելիորեն պետք է կատարվի»: Ինչպես վերևում տեսանք, շատ հրատարակություններ արդեն իրականացված են, մասնավոր, կեն նկատի ունենանք նաև Բ. Բարեպիլու, Վ. Ցիակարիշվիլու և ուրիշների՝ առանձին գավառների վիճագրության նվիրված աշխատությունները: Այդ ամենը, անշուշտ, կարելի է գինել իբրև այսպա մասնաշարալիս հրատարակության նախապատրաստություն:

Վրացերեն արձանագրությունների աշխարհագրությունը, ինչպես և պետք էր սպասել, անհամեմատ ավելի ընդարձակ է, քան բուն երկրի պատմական սահմանները, թեև նրանց գերակշիռ մասը ներսում է գտնվում: Գիսելու է, ասակյան, որ Վրաստանից դուրս գտնվողներն էլ մանրական ստեղծություն ունեն երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կայսրության և համասարակի նկատույթին են նրա պատմական անցյալի ուսումնասիրելիս: Հայերի հետ միասամասակ վրացիները ևս բրիտանյա Արևելքի առավել նշանավոր սրբավայրերում և կրթօջախներում ունեին իրենց մենաստանները, ուր ոչ միայն մասնագրական գործունեությամբ էին պարտավորվում վրացերենի վերածելով հունարեն, ասորերեն, հայերեն, արարերեն և այլ լեզուներով գրված աստվածաբանական կարևորագույն երկեր կամ ստեղծելով ազգային մասնագրության նոր գործեր, այլ նաև կառուցում էին ճարտարպետական հուշարձաններ՝ վիճագիր անհրաժեշտ հրատարականերով: Այդ շարժառիթով են գոյացել Պոպոսիանի շրջա հնագույն վրացերեն արձանագրությունները, որոնց գալուցիներ վանական-մշակութային աշխույժ գործունեություն է վկայում 5—6-րդ դարերում¹⁰: Վրացի և վրացախոս միտրաններ կային Սև լիաների (Ամասոսյան լիաներ) վանական հաստատություններում, որնք 13-րդ դարի սկզբներին համաբաշխ գործակցության մեջ էին սեպա հույն, հայ և ասոր պաշտանակների հետ: Այսպիսիս բնորոշմամբ «ի տուն իշխանավանան հայոց են ասորի իշխանք

¹⁰ Զ. Գրիգորով, Լեզվաբանական և մատի ձեռնարկներում խորտակված Երվանդանի և Երվանդանի արձանագրություններ, Երևան, 1927, հ. 1, էջ 177—189.
¹¹ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹² Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹³ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹⁴ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹⁵ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.

¹⁰ Բ. Շեքվեճիշվիլու, Արևելահայկան և Երևանի և Երվանդանի արձանագրություններ, Երևան, 1933, էջ 177—189.
¹¹ Ս. Մ. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹² Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹³ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹⁴ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.
¹⁵ Ա. Մալախյան, Երվանդանի արձանագրությունը, Երևան, 1933, էջ 177—189.

և հուռում, և ասորի վանքը, և հուռոմ, և վրացի, և ունին պատի և ասրացի
 ի ասնէ Հայոց և կան խաղաղութեամբ և սիրով ամէն ազգ լիւր կենդեցոյն
 կարգին և ի ասհմանն, և զաստուած փառաւորեն¹¹։ Մինչ այդ մեկ-երկու
 դար առաջ, վրացիները նշանակալի թիվ էին կազմում Անտիոքի մշտն
 հաստատութիւններում, մանավանդ Քիլոզորոս Յ. րդ պատրիարքի օրոք
 (1057—1059), ուստի ամենեկին դարմանալի չէ վրացիներն արձանագրութիւն-
 ների սովորութիւնն այստեղ¹²։ Արդարեւ կան և Պետրիծոնում¹³, ենթադրելի
 են Ախուսում, զայն և այլուր։ Որքան էլ սակավաթիվ, նրանք պերճախոր
 վիպարութիւններ են, ինչպէս արդեն նշեցինք, վանական ազգ կենտրոններում
 վրաց հոգևորականութեան սեական գործունեութեան։

Վրաստանի սահմաններից դուրս գտնվող արձանագրութիւնների երկ-
 րորդ խումբը կրթւթի է կոչված կամավոր կամ հարկազրկ արտագաղթումների
 հետևանքով առաջացած վրացական բնակավայրերի զոյացման փաստով։
 Ուստի, Պետրբուրգի, Մոսկովայի և այլ բազմաքաների հանցատարաններում
 սպասելի են ու կան վրացիներն հիշատակարանները, նրբին էլ զուգահեռ
 ուսուերեն կամ հայերեն տեքստերով¹⁴։ Նմանատիպ հուշարձանների ավելի
 մեծ քանակություն պահպանվել է Պարսկաստանի վրացական կամ հայ-
 վրացական բնակավայրերում, որոնց գոյութիւնը բացատրվում է Կաթինից
 ու Քարթլիից ճահ-Արասի կազմակերպած դաճղվածային բնագաղթով։
 Վերջերս րոք Հուլայի ս. Սարգիս, ս. Մինաս, ս. Ներսես հայկական կնիզ-
 յիների նստիկներում պահպանված 17—18-րդ դարերի 22 ազգային ստականազիք
 հրատարակվից՝ նախնական ծանուցման տեսքով, նշանակալի մասը հայերեն
 կից կրկնակներով¹⁵։

Միանգամայն այլ պարագաներով է բացատրվում վրացիներն արձանա-
 գրութիւնների սովորութիւնը Հյուսիսային Կովկասում, սրի մասին վերևում
 խոսք եղավ (Պագոսանում շուրջ 15 ազգային հիշատակարան կա)։
 Միավորյալ վրացական թագավորութեան հզորութեան շրջանում, հատկապէս
 12—13-րդ դարերում, վրաց մշակույթի, զրի ու գրութիւնն ազդեցութիւնը
 քաղական մեծ ծավալների հասավ, հող նախապատրաստելով և բրիտանեա-

¹¹ Հ. Ա. Անասյան, Վարացի Այգեկցի երգի համբարշտութեան գագափարախոս, «Եւրպիսի», 1969, № 1—2, էջ 55։

¹² Տէւ. Jean Mécérian, Les inscriptions du Mont Admirable, Beyrouth, 1962, p 32—35, հատկապէս նույնի. «Expédition archéologique dans l'Antiochène Occidentale... Beyrouth, 1964, p. 106—113.

¹³ Տէւ. «Եպիս Եանով», յարտուրու մունեստրի նշանադրում և մոտ ճնայտն, տն., 1971, թ. 254—268.

¹⁴ Պետրբուրգի և Մոսկովայի վրացական հուսթիւնների մասին տն. Ե. Յանովսկի, յարտուրու վշտրտնի կրնա քերտրտրտրտ, տն., 1961; զւ. ճնայտնու, յարտուրու մունստրու, տն., 1969.

¹⁵ Տէւ. Յանովսկի տուղա, յարտուրու կարտուրու յարտուրու, տն., 1971, թ. 196—211, Այգ-
 պիսի հայտնի են գնա Քերտրտրտ հրատարակումը, տն. հրոք. «Армянские и грузинские
 надписи в церквях Джулыфи и Исагани», Труды Вост. Отд., Спб., 1859, IV, էջ 314—
 320։

կան բարոյական գործունեութեան համար։ Ավարական միջավայրում
 (հունձախում ու շրջակայքի վեց դուրսերում) բրիտանեական պաշտամունքա-
 յին կատուցների ու վրացիներն վրատարիքի նման կուտակումը, հարկավ, ոչ
 այնքան բազարական տարածման, այլ բարոյական գործունեութեան հետե-
 վանք էր՝ անհրաժեշտ անտեսական-մշակութային գործակցութեան պայման-
 ներում¹⁶։ Այդ վիպալ մատենագրական երկու կարերը հիշատակութիւն
 ունենք, որոնք վրացի արքայի հրովրիկ կովկասագիտական լայն շրջանների
 ուղարկութեւնը, մեկը պահպանվել է Վրաց մամանակագրութեան մէջ,
 ուր խոսվում է Գիմիսրի Անձնուրացի օրոք լեզգիներին (իմա՞ գագոսանե-
 րակ ցեղերին) դարձի բերելու մասին. «Այդ նույն ընթացքում (կր Սուրբ
 սարից կկած Քարտիզ Վանականը հրահանգում էր Գիմիսրի թագաւորին—
 Պ. Մ.) փալատայում էր Պիմեն Սուլուր, որը տեղափոխվեց Գարեջից և
 բնակվեց Քիլարանում՝ անձակներէց մեկում, և դարձի բերեց լեզգիներին
 հիւանասութեւնը, որոնք անարկում էին բրիտանեական հավատը։ Միաժա-
 մանակ փալատ էր (նույն Պագոսանում—Պ. Մ.) նաև մեծ գործիչ,
 մարտնիվ մեխ Անտոն Նարեկեցի—ձեն»¹⁷։ Երկրորդ տեղեկութեան
 սովելի հանգամանայից է, գրված 1310 թ.

Երբ մեր երանելի պարտի-
 արք Նուրիսիան այցելեց Կաթին՝
 Անտիոքի եպիսկոպոսութեան, և
 այնտեղից կկալ Մասուր, Կակ-
 էրսեն և անցալ տամարները՝
 Կարի կրորդութեան, Կումի՝
 Ասովածամի, Կերպիում՝ ասա-
 րեղաղոր սուր Նարայի, Զարում՝
 սուր նարավիկ Գիորգի, Կար-
 դիսում՝ սուր Հարայի, Գանու-
 Կում՝ Արլիի, Բիշ-նուխում՝
 Ասովածամի, Կարդաշնում՝ Ն-
 դիայի, Քարայարանում՝ ամե-
 նայն սուր ասարայ Պետրոսի,
 նաև խոնձերի, նարայի, Քուլե-
 թի, նեկերսի, Կրսի, Զարի, Քեա-
 րանի, Մալ-Փիսիսի, Փերիան-
 Մուխախ-Մամրիսի և ամբողջ
 դաշտի տամարները, որ է՝ ին

¹⁶ Տէւ. Դ. Մ. Աթաք, Христианские древности Аварии, «Ученые записки Института
 истории, языка и литературы Дагестанского филиала АН СССР», Махачкала, 1958,
 էջ 161—182; Մամ. Н. Мамр. Албанская надпись, «Краткие сообщения о докладах и
 результатах исследований Инст. вст. мат. культуры», М.—Л., 1947, стр. 7—14.

¹⁷ Վրաց մամանակագրութեան, երևան, 1971, էջ 151—152; Քաղպիզ տն. յ. II, 283:

Գտնվածություն՝ 87 (ըստ Հ. Թրքելու անտիգ աշխատության), Հովհաննավանություն՝ 80 և այլն: Հանգուցյալ վիճադրագետ Ս. Բարխուդարյանի նորերս լույս տեսած «Գիվան հայ վիճադրության» շորորդ պրակում ներկայացված են Սևանի ավազանի (Կամոյի, Սարտունու և Վարդենիսի շրջաններ, առանց Սևանա կղզու) արձանագրությունների՝ 1547 միավոր: Ուստի շափազանցություն չէ, երբ ասվում է, թե «Սեկ տանտյակ հաղարից անցնում է դիտությունը հայտնի հայաստա մեծ ու փոքր վիճադրերի ընդհանուր քանակը»²², Չմանելով նման իրողության բացատրության մանրամասների մեջ, հարկ է, սակայն, նկատել, որ ամենակարևոր գործոններից մեկը կենտրոնացած պետականության տեսական չդրությունն էր: Վարձատրության հրովարտակների, կոնգրանների, փաստազրերի, պայմանագրերի, նվիրագրերի և բազմաթիվ այլ վավերագրերի հրատարակման վիճադրյալ եղանակն է, որ աստիճանաբար ավանդական էր զարակել: Վրաստանում այդ անհրաժեշտությունը մեծ չէր, որովհետև կային փաստագրերը վերահսկող ու պահպանող արքունական, կաթողիկոսական, թերևս և առանձին իշխանական տների դիվաններ, ուստի միջնադարյան հայկական ոչ մեծ թիվ կազմող վավերագրերի գիմաց Վրաստանում ունենք հսկայական հավաքածուներ, «մեկ տանտյակ հաղարից» ավելի փաստաթղթերով²³:

Այս իրավիճակը արտացոլվել է Հայաստանում պահպանված և հայագիր, և այլալեզու վավերագրերի մեծաքանակության մեջ. այստեղ, վաղ շրջանի հունարեն, լատիներեն, արամեերեն արձանագրություններից հետո (այլ երևելի է ուրարտերենը), հայերենին զուգահեռ ու միաժամանակ փորագրվել կամ ղեկավարվել են բազմաթիվ արաբերեն, պարսկերեն, վրացերեն, թուրքերեն և այլ արձանագրություններ, որոնց մեջ բավական մեծ տեղ է հատկացված վրացերենին:

Այսպիսով, բնական է, հայ վիճադրագիտության առաջնահերթ խնդիրը պատմական Հայաստանի արածքում պահպանված վիճակային հիշատակարանների հավաքումն ու աստիճանական կամ ճանկարծահաս կործանումից փրկելն է եղել, որ ղեկ աչսոր էլ չի դադարել օրակարգի հարց լինելուց: Նման պարագաներում այլալեզու հուշարձանների ուսումնասիրությունը, իբրև օժանդակ աղբյուր, դերակատարացան կապված է մասնագիտական առանձնակի խնդիրների ստեղծումում: Երանց դիմելու անհրաժեշտության հետ: Վիճադրերի հրատարակման այս խնդրաբուխ հերթակարգը պայմանավորված է և այլ գործոններով. եթե հայ վիճադրության մասնագետը գործ ունի հրատարակելի նյութի գանգիվածային տեղագրության հետ, որ նպատակ է աշխատանքի ընդգրկումը ընդլայնելուն, ապա այլալեզու հուշարձանները հիմնականում ցրված են, հաճախ մեկ-երկու օրինակով:

²² Ս. Ս. Ավազյան, Վիճակային արձանագրությունների հեյտարանություն, Երևան, 1973, էջ 12:

²³ Երանց մասին ամփոփ տեղեկանք տե՛ս Ս. Ս. Какабадзе, Грузинские документы Института народов Азии, М., 1967, էջ 6—13:

տարբեր շրջաններում, աննկատելի դառնալու շափ լուծվելով տեղի հայերեն արձանագրությունների բազմություն մեջ:

Հարող խնդիրը այլ բնույթի է. եթե հայերեն արձանագրությունների վերածնության-հրատարակության համար այլալեզու աղբյուրներն ու վիճադրերը վճռահան նշանակություն չունեն, ապա Հայաստանում եղած այլալեզու-այլալիր արձանագրությունների ուսումնասիրության, նույնիսկ հավաստի վերածնության համար պահանջվում է նույն հուշարձան-հուշարձանախմբի հայերեն շատ արձանագրությունների հիմնավոր իմացություն, իսկ վերջինս, ինչպես նկատեցինք, հարյուրավոր վիճադրերի դիտական հրատարակումից հետո է հնարավոր գտնում: Խոսքը ամենից առաջ վերաբերում է վրացերեն արձանագրություններին, ինչպես որ զովագրանում ենք պատկերացնել Վրաստանում եղած հայերեն վիճադրերի ուսումնասիրություն կամ հրատարակություն՝ առանց տեղի վրացերեն հիշատակարանների հիմնավոր ծանոթության: Առանց Անիի, Պղնձահների, Քրտայրի, Կոչի և այլ վայրերի հայերեն արձանագրությունների ավյանների գրեթե անհնար պիտի լիներ այնտեղ գտնված վրացերեն հիշատակարանների թվագրումը, ներկայացվող անձանց ինքնության ճշգրտումը, հաղորդվող ղեկավարի կամ իրողությունների արժեքավորումը, մի խոսքով այն ամենը, ինչ ուսումնասիրության է կոչվում և ոչ սոսկ նույնական տեսքի հրատարակում, թեև վերջինս նախապայման է: Այստեղից բխում է Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունների քննության մեծաքանակ եղանակի անհրաժեշտությունը, որովհետև նրանց բնագրի ու բովանդակության ճիշտ ընկալումը, առավել ևս թարգմանությունը, աղբյուրագիտական հանգամանալից աշխատանք են պահանջում:

Այս ամենի պատճառով է, ահա, որ Հայաստանի վրացերեն արձանագրությունները տակավին սպասում են լրակատար հավաքման, վերածնության և ուսումնասիրության:

Վերևում արդեն նշեցինք, որ այլալեզու արձանագրությունները կրկնակի հետաքրքրություն են ներկայացնում՝ ըստ վիճադրման տեղի ու լեզվի, լույս ավժմ պիտի ավելացնենք, թե Հայաստանում եղած վրացերեն հուշարձանների ո՛չ տեղը, ո՛չ էլ լեզուն համեմատելի չեն, ասենք, նույն Հայաստանում կամ Վրաստանում գտնվող արքերեն, պարսկերեն վիճադրերի: Այնտեղ եթե խոսքը այլ երկրի նվաճելու, իշխելու, մայրենի լեզվով հրահանգներ առաքելու, տեղում երկար բնակություն հաստատելու մասին է, ապա մեկանում երկիրը չի նվաճվել, այլ ապատարվել է (հիշենք անցյեղից դիմումը Գրորգի III-ին, Զարարյաններին գիմավորելու խանգավառությունը և շատ այլ փաստեր), մեկանում արտոնագրեր շնորհողը ընտանի է կ'ժազումով, կ'գործունեությամբ, յատանց խոսքը նոր հարկեր սահմանելու մասին չէ, այլ օտարից ապատարելուց հետո այն թեթևացնելու, վերապես, խոսքը շինարարության մասին է և ոչ ավեր-ավաբի: Ընդ որում՝ այդ արձանագրությունների լեզուն (ինչպես և նրանով եղած մասնագրությունը) բնտանի ու հատկանալի է ոչ միայն էթնիկապես վրացու, այլ զավանդակա

Քելագրանքով իրեն վրացի համարող տեղացի հայի համար: Եկեղեցիներ օձնելու առիթով Անի մամանսեմ վրաց Նուրիսան կաթողիկոսը դիմում է առաջ քաղարիքի բնակիչ վրացիներին», ուր «վրացի բարձր մեք տեքստում ունի, անշուշտ, գրականական տերմինի նշանակություն. վրացիները սակայն հասկացում են ոչ միայն արշավը վրացիները, այլև հայ-քաղկեդոնականները»²⁴: Ի վերջո, Հայաստանի և Վրաստանի հիշյալ դարաշրջանների պետական, հասարակական-քաղաքական կացությունը, տնտեսական-մշակութային ինստիտուտները, բարոյակրթական նորմերը այնքան քնդհանուր էին և շատ բնակավայրեր այնքան դիրկրոնդիան, որ Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունները, ինչպես որ հայազգի բազմամիլի այլ հիշատակարաններ, հավասար չափով վերաբերում են և Վրաստանի պատմությանն ու մշակույթին: Տեղին է վերադառնալ ակադ. Ն. Մարի քաղմամբիվ իրողություններից բխող եզրակացությունն այդ բնօրհանության կապակցությամբ. «Ով ուզում է ոչ միայն համարել բազմ վրաց հիմ զրականությունն այսպես «Ընձնեմավորից», այլև հասկանալ նրա հանձարեղ քերթող Շոթա Ռուսթավելուն, նա պետք է իմանա Անիի հայոց ճարտարապետության գեղարվեստական հուշարձանների պատմությունը, հատկապես քաղաքացիական: Ով կամենում է հասկանալ մեծ մասամբ անանուն անհի խոշոր նկարիչ-կարտարպետներին, նրանց դարձանահարչ սակզմագրությունները, նա պետք է խորանա վրացական ասմաներիական «Ընձնեմավորը պոեմի» բրիտանյա Արենյի միջնադարյան քնարերգության այդ հրաշակերտ ոտանահարություն մեջ: Բայց, այնպեսաներեւ, նրանց այդ հողհարգատուությունը (քոճետ) հայոց վրաց վրա, կամ վրաց՝ հայոց և կամ մահնադականները մեկի և մյուսի վրա սակ ազդեցությունը չի գոյացել: Պատճառները ավելի քնդհանուր ու ավելի խորն են: Հայաստանում ու Վրաստանում հինց 12—13-րդ դարերում, անկախ Բագրատունիների վրացական ճյուղի հովանու տակ նրանց քաղաքական միավորումից, ավելին՝ հակառակ կրոնական բաժանվածությանը, սոցիալական նույնական պայմաններում՝ քաղաքների ու քաղաքացիների նշանակության աճ, մշակութային-բրիտանյա աշխարհի շնունն ու հարգողացումը մահնադականի հետ, ձևավորվեց գեղարվեստական համաման մշակելի եվ աճ, այդ առնչությանը հայտերի մոտ գոյացած գեղարվեստական իգիպները, գրականությանը եկեղեցիին տիրացած լինելու հետևանքով, արտացոլում դրան Անիի ճարտարապետական գծերի ու ղեկորատիվ պատկերների հարուստ ժաղկումն մեջ, իսկ վրացիների մոտ, վրացական արքունիքի ու առհասարակ վրաց ավատատիրական աշխարհի կողմից աշխարհական գրականության պաշտպանության պարզացում,

²⁴ Н. Марр, Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910 г.), ИАН, 1910, стр. 1441; հմտ. Նուրիքի՝ **Иоанн Петрицкий**, Грузинский неоплатоник XI—XII века, стр. 8—9; հմտ. В. Дондуа, К социально-экономической жизни средневековой Грузии по армянской надписи (1218) Епифания, «АН СССР академикку Н. Я. Марру», М.—Л., 1935, стр. 663; հմտ. **Հովհ. Օռթյան**, Միտան գլխի մեծ լուսնակայն առաջնությունն ըստ մեծ լուսնակայն Վրացացի, «այդ Ֆրոնտի», Կ. ՎԻ, 1936, էջ. 102.

աշխարհական քնարերգության մեջ, ամենից առաջ այն պատիղ Շոթա Ռուսթավելու սակզմագրությունն մեջ»²⁵: Այժմ, կարծում ենք, ակներև է, թե ինչու Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունների ավելի անմիջականորեն են ստեղծվում այն երկու երկրների պատմությանն ու մշակույթին, քան այլ լեզուներով եղած վիճակագրությունները: Գրաքեր փաստորեն, մեկ բնօրհանուր միջավայրում գոյացած հիշատակություններ են: Ն. Մարի ակնարկած «Բագրատունիների վրացական նյութի հովանու ներքո» հայ-վրացական քաղաքական միավորումը նախապատման գրքով ոչ միայն մշակութային սերտաման, այլև օտարների ոչնչում նույնիսկ մեկ ամբողջական պետական ու էթնիկական միավոր դիտվելու: 1255 թ. Անիում գտնված Ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուքը Շահնշահ նրկայնարագուկին կոչում է «երրեմի ամենագրավոր վրացի իշխան», Հարկով, ամենից առաջ վրաց պետականության սահմաններում նրա գործունեությունը նկատի ունենալով, թեև պակաս կարևոր չէ և «Շուրթմեական եկեղեցու զավակ լինելու» պարագան²⁶, 12—13-րդ դարերում «վրացի» և «Վրաստան» հասկացությունները այնքան էին քաղաքական ու զավթանական երանց ստացել, որ պարսիկ պատմիչ Ամինդ Էլ-Հաֆարին, «Արդարասանում» Մելիք-Շահի օրոք կատարված զիպերի մասին խոսելիս անգամ, Անիի դեռտղում է Վրաստանում, իսկ բնակիչներին վրացիներ համարում՝ զրա տակ հայոց բրիտանյա լինելը հասկանալով. **و اهل جرجان و بلاد نصاری و كنگر** — վրաց բնակչության մեծ մասը բրիտանյաններ էին²⁷: 13-րդ դարի պարսիկերեն մի աշխարհագրական երկուք՝ «սառի տակ խոսվում է երկու քաղաքների մասին, որ մահնադականներ կան, բայց վրացիների ձեռքին են (در دست جرج مانند اند) Արենյադաներ Ռ. Կիկեռածի և Յ. Կարխանիքի ընդունելի եզրակացմամբ խոսքը Դմանխի և Դիլիի մասին է»²⁸; XIII դարի Հայաստանի և Վրաստանի անցյուղարձերին լավատեղյակ Ջուվեյնի Ջալալ Էղ-զինի արշավանքների մասին խոսելիս գրում է, թե խոջից զուր ցավով նա «...արժիլը զելի Դրաստան և Դվիլում, որ Վրաստանի սահմանն է, միմյանց միացան»²⁹ **(متوجه گرج و گشت و زر که مسرحد گرج است بیکدیگر میومشد)** Այս ամենից ինքնին բխում է, թե մեզ հետաքրքրող արձանագրությունների մեծ մասի վիճագրման շրջանում՝ 12—13-րդ դարերում, «վրացի տերմինը

²⁵ Н. Марр, Ани, 1934, стр. 37—38.
²⁶ Հովհ. Նուրիքյան, Ուղեգրություններ, Ա, Երևան, 1932, էջ 10—20:
²⁷ S³ N. H. Khanykof, Excursion à Ani en 1848, **տե՛ս** M. Brosset, Rapports sur un voyage... St. Pet., 1849, p. 147, 151. հմտ. **Ն. Մարր**, Նշվ. աշխ., էջ 93—94.
²⁸ S³ N. Д. Микаухо-Маклаёв, Географическое сочинение XIII в. на персидском языке, «Ученые записки Института востоковедения АН СССР», т. IX, М.—Л., 1954, էջ 175—213.
²⁹ Ս. Ջոնան, Նշվ. աշխ., էջ 13:
³⁰ S³ N. H. Կիկեռածի **հրատ**, չլլցրեն Երևանի Արժանատու Մելանց, տն., 1974, էջ. 30 (17)

կարող էր նշանակել վրաց թագավորների իշխանությունն ընդունած բոլոր ժողովուրդները» (Ն. Մառ, անդ) նման ընկալումը այնքան ամուր էր և այնքան տեսական, որ նույնիսկ 19-րդ դարում, «Կաթարների պատմության» հեղինակ պարսիկ Միրզա Բադիյի Գ. Շերմազանյանի այն դիտողությանը, թե նա սշտան անձնավորությունների անուններ հիշելիս ուր ուրք հայ և ուր ուրք վրացի էր անվանում», «կարի սանունովյա՞մքս պատասխանում է. «Ե՛րե՛զ զանպատեմյունն ունի Հայ գրած կամ վրացի, այն ինչ երկուն էլ խաշապաշու են (ինչփեհեսա) և մեկ երկում, միասին խառն ընկալում են...», իսկ կրթող դրուցակիրքը՝ «մեկ գառամյալ էրևելի գրագետ պարսիկ, որ ներկա էր այս մեր խառնություններին, ավելացրեց, թե մեր մեջ պատերազմական մարտն (ս՛հար շմշի—սրի, թրի տեր) կանվանենք զյուրչի, իսկ զվճառականն, արհեստավորն և երկրագործն՝ Լրմենի»³¹:

«Մեկ երկրում, միասին խառն ընկալվելու արձագանքը նկատելի է թե՛ մասնագրական հուշարձաններին, ճարտարապետական կոթողների բազմաթիվ վավերական ընդհանրությունների մեջ և թե՛ իշխանական կամ թագավորական տան ներկայացուցիչների՝ երկրի իրական բազարական վիճակն արտացոլող ստեղծանկերում: Եթև 1001 և 1036 թվականներին Անիում փորագրված արձանագրություններում Գաղիկ Բագրատունին «Հայոց և վրաց շահճշահ»³² էր կոչվում, ապա հաջորդ դարում արդեն վրաց Բագրատունիներն էին այդ փառաբան ժառանգորդը, մանավանդ 12—13-րդ դարերի սահմանադիրին, երբ «Աստուծառն էր իշխանք Հայոց ազգաստճմիս»³³ Զաքարիա ամիրսպասալարն ու Իվանն ամբարեկը իրենց պիտի կոչեին «Հասաուարիմ ժուսո» «սաժեալ և բարեպաշտ և թագուհեաց թագուհոյն թամարի»³⁴, իսկ վիճաբոված տասնյակ իրադարձություններ պիտի թվագրվեին «թագաւոր Հայոց և վրաց» Գավթի Շինարարի, Գիրոզի 3-րդի, թամարի, կաշայի, Գիմիտրն Անձնուրացի իշխանության տարիներով: 1095 թ. այժմյան Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում եկեղեցի կառուցող ոմն Չնեւյաի շորս որդիները իրենց ապրած ժամանակները ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ են նկատել եկեղեցու շինարարները թվագրել Կյուրիթիան Աբաս I թագավորի և վրաց Գիմիտրն բահանալապետի գահակալությունների հիշատակությամբ: Որդեղուկ թյուր կարծիք չստեղծվի, թե «Հայոց և վրաց» թագավոր կոչվել միայն բարի ցանկություն էր և ոչ փաստական-պաշտոնական իրադրություն, անհրաժեշտ ենք համարում բերել Գավթի արքային 1285 թ. Ավանում հրապարակած արձանագրության սկզբածքը. «Ի թվիս ՉԼԳ (1285), յաշխարհակալութեանս արքայից արքային Արղուին, ի թագաւորեան վրաց և հայոց Գվմաւուի,

ես Գաւթի՝ որդի Գվմաւուի թագաւորին, թողի զկանայ այգեաց շարէան...»³⁵: Մեկ հովանու ներքո երկրի բազարական միավորման զգացումը այնքան ամուր ու տեսական էր, որ նույնիսկ 18-րդ դարի վերջին տասնամյակներին հեղհահայ հրատարակությունների սխաղոսաթերթեր վրաց Հերակլ II թագավորի հասցեագրումով էր կազմվում:

Հայաստանի վրացերեն արձանագրությունների տեղագրական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է զիմել Զաքարյանների վարած զինական զործողությունները պատմող աղբյուրներին: Բնութագրող դանական աղբյուրներից բաղկած անդեկություններով շճանարեռնելու համար կարելի է բավարարվել Կիրակոս Գանձակեցու ամփոփ, բայց շատ ընդգրկուն վկայությամբ: Վիճակն որոշ աղբյուրներում նույնիսկ «Բագրատունի» և «թագաւոր» հորերոված նրկայնարգուղի իշխանները ժամանակակիցներին ներկայանում էին իրրն սարք բաշք և ճոխք իշխանութեամբ, պատուաւը ի թագուհոյն վրաց, որ Թամարն կոչէր, զուսոր Գիրոզեայ բաշի, որդւյ Գնձաւուրէի, որոնցից «Զարաւէ էր զորավոր վրաց և Հայոց զորու, որ ընդ Անամբ թագաւորին վրաց, իսկ Իւան՛ ախարալութեան պատուով: Բայց կարեւոր այդ չէ, այլ այդ ամենին հետևող շարունակությունը. «Առքարազում մարտս բաշութեան ցուցին, բանդի գրագում աշխարհս Հայոց, զոր ունէին պարսիկք և տանձուր, առին ի նոցանէլ յինքանս՝ զգաւաւս, որ շուրջ գծովոմն Գեղարքունոյ, և զՏաշիր, և զԱրարատ, զԲյւիք բաղար և զԴուին, և զԱնրեղ, և զԱնի բաղար և զԿարս, և զՎայոյ ձոր, և զաշխարհն Սինեաց և որ շուրջ գծովաւ են բերդք, բաղարք, և զուսորք. հարկատուս սարտին և զուլտանն Կարեոյ բաղարին. աւերեցին գրագում զաւաւս Պարսից և զԱսրպատականս, ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց»³⁶:

Ահա, այդ «չինքեանս տան» զավաններում նրանք հարյուրավոր շինարարական, նվիրատվական, արտոնագրային և այլ արձանագրություններ են հրապարակել՝ հիմնականում հայերեն, իսկ երբեմն էլ Հայոց Յոր կանմավորվող իշխանական տներին, եկեղեցական սպասավորների մի մասին ու ինակալության որոշ շրջաններին հասու վրացերեն լիզվով: Վրացերեն արձանագրություններ ունեցող Հայաստանի Անի, Զանգլի, Կարս, Վաղարշապատ, Կոշ, Քեժաուրք, Լեւանցք, Հեկվանք, Շահնազար, Քորյալ, Հաղբատ-Սանա՛հին, Պղնձահանք, Կոզր-Բարանա բաղարները, ավաններն ու մենաստանները գտնվում են Զաքարյանների ազատագրած հիշյալ զավաններում ու բնակավայրերում, և այնտեղի արձանագրությունները նշանակալի շափով այդ նախադարական տան անվան հետ են անջվում: Այսպես, օրինակ, Քորյալի բոլոր վիճաքերը (16 միավոր) Զաքարյան շառավիղների շինարարական

³¹ Գ. Շերմազանյան, Երևելի հակադուք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 9—10, շիշյալ պարագան, ցավթք, գանց և անվուել Մ. Քողուալի վերջերս հրատարակած «Վրաց-պարսկական զրգագրեթ» գրքում (1971):

³² Գիվան I, 35, 48:

³³ Անդ, էջ 14:

³⁴ Անդ, էջ 58: Հմմտ. Զաքարյայի 1201 թ. արձանագրությունը Հափնում (ան՛ս է նվիպարյան, Հատրնա վանքը և նրա վիճագրությունը, «Նշմամբին», 1957, Ա, էջ 59):

³⁵ Տե՛ս Կարս Գավաղաշյան, Ավանի երկեղվյան ժամկեղք արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18—19:

³⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությունը Կ. Ա. Մելիք-Օնանյանի, Երևան, 1961, էջ 162—163:

հիշատակարաններ կամ տապանագրեր են, իսկ Հնեվանքի, Պղնձահանքի, Քեծառուչքի, Անիի և Կոշի շատ կարևոր արձանագրություններ գրված են կամ նրանց կողմից, կամ նրանց արեշատություն մաղթելով: Զարթյան տիրություններում պաշտոնավարող որոշ ձեռնավորներ, նախարարական այդ տան հովանավորությունը վաչկորդ ավատատերեր ու իշխանական որոշ սոսճներ ճարձի էին համարում հիշատակագրել երբեմն հայերեն, երբեմն էլ վրացերեն լեզուներով: Անիում, Երևանում, Մրենում և այլուք բազմաթիվ հայերեն վիմագրի արտոնագրեր ու կալվածագրեր թողած Մահմադինը վրացերեն արձանագրություն է հրատարակում Անիում, ամիրայեա Բուրան ու նրա ժառանգները (Քերես նշանավոր Աբուլ-Հասանի տոհմից) Քեծառուչքում իրենց հիշատակարանները վրացերեն են գրում, իսկ Գեղարքունիքում ու Սյունիքում՝ հայերեն հիշատակության արժանատեում: Մահկանանքիցի Արժարտիներ Սաչունն ու Խոսրուրուզան թեև գրավոր արձանագրումները կատարում են հայերեն, բայց նպաստում են Հագրատի որմնակարները վրացերեն մակագրություններով ժոժուկուն, իսկ Արուսեայան տոհմի ներկայացուցիչ Իվանին Բարանաչում (Կոզրի մոտ) ամբողջաշինության փաստը պատմում է իր մայրենի վրացերենով: Կարելի էր այլ օրինակներ ևս բերել, բայց այլևս պարզ է, որ վրացերեն արձանագրությունների տեղագրական բաշխումը լիովին համապատասխանում է պատմական աշխարհագրության մեջ տեղի ունեցող փոփոխություններին ու կրկրի բազմաանախ իրավիճակին: Նույնիսկ Չանգլիում և Կարսում եղած մեծագրերը սահմանված զգրոսից զուրս չեն: Նման եզրակացության անբռնադրոսիկությունը կարելի է ապացուցել բննարկվող վրացերեն արձանագրությունների ժամանակագրական վերլուծությամբ:

Հարյուրից ավելի վրացերեն վիմագրերից հնագույնը թվագրվում է 1022 թվականով (Վանանա-վանք), իսկ ապա՝ այդ դարի վերջով (Շահնագարի և Կուրթանի հիշատակարաններ)³⁷: Հիշյալ պարագան պայմանավորված է նրանով, որ 1026ի Կյուրիկյան թագավորության արոշ շրջանում զեն մինչև Բագրատ 4-րդի զահակությունը ընդգրկվել էին վրաց բազաբախկան պահգություն ուրարթը, իսկ հետո միացվեցին կենտրոնականացման ճանապարհին գտնվող վրաց թագավորության հարավարևելյան զավանդերին կամ նրանց հետ հակամարտության մեջ դնելով Լիպարիայանների տիրություններին: Գիտելու է, որ Քամար թագուհու օրոք Վրաստանի հետ անմիջական սահման կազմող մի քանի զավանդեր ձևավորվեցին իբրև վարչական նոր միավորներ՝ ծարավագավառային էրիսթավություններ (სადმბოტო სავრძობსოცო), որոնք Նըշանակալի գեր էին խաղում երկրի սուզմական կյանքում, ինչպես նաև բազարական հարաբերություններում: Քամարի պատմիչի հիշատակությունում այսպիսին էին Գագի, Զարագիտ-Տաշիրի, Կարսի էրիսթավությունները: Ինչպես տեսնում ենք, Հայաստանում վրացերեն արձանագրությունների

³⁷ Պ. Զ. Քանաչիլու մատնացույցած Կարսի 990 թ. և Չանգլիի 1030 թ. արձանագրությունները իրականում ավելի ուշ շրջանի են: Նրանց մահրամասն քննությունը կանգարողանա ոչ համապատասխան բանում:

երևան զարբ փաստորեն հաշորդում է այն կամ այն զավառի անցմանը վրաց տիրապետության սահման: 12-րդ դարում գրված փաստորեն մեկ արձանագրություն կա, որ պատմում է 1154 թվականին Հնեվանքում (Զարագետի սփին) Սմբատ Օրբելու կատարած վերանորոգության մասին: Այսուհի պարմանալին նրա դրույթները չէ, որովհետև զավառը Գավթի Շինարարի օրոք Վրաստանի կազմ էր մտնվում և Օրբելյանների իբրև տիրույթ սղվել, այլ նրա պահպանության պարագան, քանի որ տոհմի 1176/7 ապստամբությունից հետո, ըստ Սուրբելյանի տեղեկության, «Գեղարքի» հրամայեաց բեկի զիշատանի ավզին Օրբելյանց ի պատմագրոց իրեանց, նաև՝ լեկեղեկեաց... զի մի՛ ևս իշխեցին զանուն նոցա և մի՛ թողցին ի նոցանէ զքր ի վրաց աշխարհին»³⁸:

12-րդ դարի վերերից սկսած, կազմված Զարարյանների առաջիկացման հետ, մեզանում վրացերեն արձանագրությունները հասխառակ են գտնուում և առավել սովորաբանում Խվանի բազիկոնական գտնուուրց հետո: Անիի, Կոշի, Քեծառուչքի, Քորայրի, Կոզրի, Պղնձահանքի և այլ վայրերի արձանագրությունները (մի քանի տասնչալի) գրված են հենց 13-րդ դարում, հավասարապես քաշխվելով այդ դարի գրեթե բոլոր տասնամյակների միջև 14-րդ դարում նրանց թիվը նորից նվազում է, իսկ Չանգլիի 1362 թվականի վիմագրով փաստորեն ավարտվում, եթև շահվելներ 18—19-րդ դարերի որոշ տապանագրեր, այն էլ տոհմական տապանատներում, որ երկրի բազարակառմաղկությունից կաշտարան գրեթե անշուրթուն շունեն³⁹:

Այսպիսով, հրատարակվող վրացերեն արձանագրությունները զերպագանցակա 11—13-րդ դարերի են, պայմանավորված վերևում թվարկված պարագաներով: Բայց նրանց մասին ունեցած մեր պատկերացումները շատ թերի կլինեն, եթև անհրամեշտ շափով չընդգծվի բազիկոնականության գերը, Որբան էլ սղզային դարձած միարեակ եկեղեցին պայքար է մղել, այնուամենայնիվ 6-րդ դարից սկսած մեզանում քաղկեդոնականություն միշտ եղել է մերթ ստվարաթիվ մենաստաններով ու զորեղ, մերթ կա կաստ այն մայրաքաղաքի անկյունում ապաստանում: Եվ ամեն անգամ, երբ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում, հայ բազիկոնականության գործունեությունը աշխուժանում էր: Ասկա նյութերով կարելի է բուն Հայաստանում բազիկոնական օջախների անկաշխանղ վերերի երկու շրջան մատնացուցել՝ 6—7-րդ դդ. զարգվալից մինչև Մանուկեղիսի ժողովը (726 թ.) և 11—13-րդ դարերը: Նրանցից առաջինը կազմված է Բյուզանդիայի ազդեցության ուրբաի հետ (Մավրիկից սկսած), երկրորդը՝ Վրաստանի: Եթև նախորդ դարերում հայ բազիկոնականները կարող էին նույնքան ազգային ներկայանալու հավակնություն ունենալ, որքան պաշտոնականացած եկեղեցին, հավա-

³⁸ «Պատմութիւն Նահանգին Սրապանս, Քիֆլիս, 1910, էջ 380:
³⁹ Այսուհի չենք արժարծում Զլարթնոցի ծեփերի կամ Օնուրի խաչքանդակի վրա եղած վրացերեն մակագրությունների խեղիքը, քանի որ նրանց ժամանակը սուղուց սահմանելի չէ, իսկ թուլանգրությունը միարանոգին ողորմի հայեկուց այն կազմ չի անցնում:

սարգսյան սեր ու ստեղծող լինելով հայագիր մատենագրության, ապա երկրորդ շրջանում նրանք սկսում են մշակութային առումով օտարվել, բայց նպաստավոր պայմաններում շարունակելով գործունեությունը: Նրանց շրջանում երրից արթնանում է իբրև ազգային եկեղեցի ներկայանալու ձգտումը, իսկ վերջինիս թելադրանքով նրանք հետամուտ են շատ բազիլիոնական նշանակությամբ ըրթնություններ հայերեն թարգմանելու, այն էլ արդեն ոչ այնքան հումարներից, որ երբեմն և բնագիրն է, այլ իրենց համար մարմնի, ճիշտ եմ՝ հայերենի հետ հավասարապես մայրենի վրացերենի միջնորդավորմամբ: Եվ ա՜հ այս միջավայրում է, որ վրացերեն արձանագրություններ փորագրելու օժանդակ խթաններ են ստեղծվում:

Ավելին, դարերով մի տեսակ անպաշտոն գոյություն հասնելուց հայ բազիլիոնականները վրաց պետականության գործընթացում ու Հայաստանի շատ զավառների հովանավորությանն ստանձնելու պայմաններում սկսում են կազմակերպչորեն գումարվել և անգամ երեք թեմ կաղմն՝ Անիի, Կարսի, Վաղարշապետի, ինչպես այդ վկայված ենք գտնում վրացերեն երկու վավերագրում⁴⁰: Հիշյալ եպիսկոպոսությունները՝ վրացական կոչվելու և Մցիխթի կաթողիկոսին ենթարկվելու փաստից երևելով, Գ. Բաբրաձեն հակված էր քնդուղի իբրև իբրց վրացական նաև էթնիկական առումով⁴¹: Սակայն խնդրի հետագա ուսումնասիրությունը մեկնաբանության այլ ելակետ մատնանշեց. վրաց նոտիան կաթողիկոսի 1218 թ. բեղաբաժկ կարգավորության գրի վիճակի տեսքով հայտարարելով Անիում ակներկ դարձրեց, որ այլևս վրացիներ տեղմինն օձի և զավանական իմաստ, այլ կերպ ստե՛ծ Հայաստանում վրացական թեմեր կաղմած վրացիները փաստորեն նույն հայ բազիլիոնականներն են, թեև չի բացառվում վրացագրիների առկայությունը ևս: Այս նշանակալի եղբակցություն հիմնական աղբյուրը բննարկվող վրացերեն արձանագրություններն են՝ «Վրաց կաթողիկոս եպիսկոպոսի» գրում է ակադ. Ն. Մարտի, — իր նշանավոր հովվական ճառում, պեղված գրվածքի տեսքով՝ Անիի վրացական եկեղեցու արձանագրության մեջ հաղորդում է, որ նա 1218 թվին այս բաղաբն է կել «վրացական», այսինքն՝ բազիլիոնական եկեղեցիներ օձելու համար: Վրացի տեղմինը, հասկանալի է, և Անիում չի բացառում ազգության վրացիներին, սակայն մեզ հետաքրքրող դրաջրբանում [այն] օձեր և զավանական նշանակություն, բնոգրիում էր բոլոր հումա-ուղղափառ զավանության խոստովանողներին, բոլոր բազիլիոնականներին, իսկ մեր բաղաբան (իմա՝ Անիում—Պ. Մ.) և ստահարակ շրջակա զավաններում՝ հայ բազիլիոնականներին»⁴²: Այս գրույթը իրավացի պատշաճանություն գտավ ակադ. Ն. Թաղաչվիլու կողմից: Քննելով Չանգլիում

վրացերեն արձանագրությունների առկայության հանգամանքները, նա եկրակցանում է. «Այստեղ (Չանգլիում—Պ. Մ.) եղև է ուղղափառ հայոց կամ բազիլիոնական հայոց վանք, և զրանով են բացառվում վրացերեն արձանագրությունները Հայաստանի այդ և այլ նման վանք-եկեղեցիներում: Ուղղափառ հայերը ժամասացությունը վրացերեն էին կատարում, և նրանց հովվապետները վրացի եպիսկոպոսներ էին: Ինչ խոսք, Կարսում, Անիում, Այաշիքում և այլուր վրաց գաղութներ էլ պիտի լինեին, Վրաստանի գործընթացում համանշանակությամբ, սակայն վրացերեն արձանագրությունների և վրացական եկեղեցիների գոյությունը ամենուր վրաց գաղութի գոյություն չի նշանակում, ինչպես Գ. Բաբրաձեն է կարծում, այլ վկայությունն է այն բանի, որ այդ տեղերում ուղղափառ (իմա՝ երկաթնակ—Պ. Մ.) հայեր են եղել: Այսպիսի երևույթ պետք է տեղի ունենա և Չանգլիում: Միտամանակ պիտի եշել, ուղղափառ հայերը վրացերեն ժամասացությունը և արձանագրությունների փորագրումը ավելի համարձակորեն ընկալեցին այն բանից հետո, երբ նրանց զավանները մտան Վրաստանի սահմանը ու Վրաստանի թագավորները նրանց հովանավորներ դարձան. այժմ նրանք չէին վախենում լուսավորչական քահանայության հարկադրանքից»⁴³: Ի զույգ, հիշյալ դարերում նաչ տեղմինը ևս երբեմն գործածվել է զավանական նշանակությամբ. Մխիթար Գոշը գրում էր «...թե վրացի զեայ մկրտան և թե նայ՝ զվրացի...» («Արարատ», 1900, էջ 498):

Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունների համահավաք ուսումնասիրությունը հիմնականում հաստատում է Ն. Մարտի և Ն. Թաղաչվիլու սույն եղբակցությունները, եթե անցում վրացերեն ժամասացության օձենալու հարցին էլ վերադառնալով միայն նաչին, այնուամենայնիվ փաստ է, որ արձանագրությունների գոյությունը գերազանցապես բազիլիոնականության աշխուժացմամբ է բացատրվում: «Հայոց հայրենի հավաքին» հրամարված և կրկին մկրտության վրացադավանությունը բնույթում Դեմետրե մարգարանի որդին միարանում է Նեկյանքին և դառնում նրա արքեպիսկոպոսը, իսկ մի բանի տարի անց՝ 1022 թ., եկեղեցի է կառուցում վրացերեն շինարարական արձանագրությամբ: Այդ շրջանից էլ սկսվում է հայ բազիլիոնականների ու զավանակից վրաց միարանակցությունը: Ընդ որում՝ հայ բազիլիոնականների և վրաց հողեր գործիչների գործակցությունը այնքան է սերտանում, որ համատեղ մենաստաններ են հաստատվում

⁴⁰ Գ. Թաղաչվիլու, Ինքնուրույն լեզվագիտություն և հայագիտություն 1907 թվական, 1938, 83-87, նմա. Լեոն Թեոֆիլոս-Նեցո, Լուրդ-Մարտի ժամանակաշրջանում, Երևանի թանգրադարանի հրատարակություն, 1964, 83-309. Գաղանկական իմաստավորումը այնքան նշանակալի դարձավ, որ հայերի մեջ սկսեց գործածական դառնալ «Գործիչ վանքի անունով»: Նման մի գեղը վկայված է Խանթրիքի 1213 թ. արձանագրության մեջ, որ է, Թեոֆիլոսի վրացի Գ. Մուսիսի վրացի արքեպիսկոպոսի կողմից ևս բազիլիոնականության նախաձեռնում է: Թեոֆիլոս-Նեցո, լեզվագիտություն, լեզվագիտություն և հայագիտություն (1956—1958թթ.) Մյունխեն, 1, տ. 1, 1960, 83-89):

⁴⁰ Տե՛ս Դ. Ս. Բակրաձե, Археолог. путешествие по Гурин и Аджаре, СПб., 1878, էջ 81—86; Գիտությունների ակադեմիայի լեզվագիտություն, 1, տ. 1, 1965, 83-47-49.
⁴¹ Տե՛ս Գ. Թաղաչվիլու, Երևանի թանգրադարանի հրատարակություն, 1964, 83-309.
⁴² Մ. Մարտի, Լուրդ-Մարտի ժամանակաշրջանում, Երևանի թանգրադարանի հրատարակություն, 1964, 83-309.
⁴³ Մ. Մարտի, Լուրդ-Մարտի ժամանակաշրջանում, Երևանի թանգրադարանի հրատարակություն, 1964, 83-309.

նույնիսկ հետափր Անտիբուս. այնտեղի ու Քովմաս եկեղեցում պահպանվել է այդ վկայող ուշագրավ մի արձանագրություն, որի վերձանութվամբ ու մենեարանութվամբ գրազվել են Պ. Պետրոսն ու Ռ. Բլեյլը: Հայ բաղկերզահայնները վրացերենով վիճադրել են յՃալցեօս ԵՐՆ Լեմցեօս—Եկեղեցիկ Կայցոյ և օստի տեղիս վանական հաստատությունների հնագիտական, վիճադրական ու մշակութային պատմության ուսումնասիրությանը գրազված շ. Մարյանք այն կըլում է «Տալ-վրացական եկեղեցի»⁴⁴:

Անհրձեշտ էլ, սակայն, միկ-եկու լրացուցիչ պարզաբան և նկատի առնել, անցի մեծատուն Սահմադիքը դավանութվամբ ազգային եկեղեցու և ներկայացուցիչը է⁴⁵, բայց և վրացերեն արձանագրություն է հրապարակում, մինչդեռ նրա հայրենակից Տիրացու Հունեցը⁴⁶ «Զարարյան իշխանների հիվանդանով ծառան»⁴⁷, բաղկերջական է, այդ դավանության նշանավոր եկեղեցու կառուցող ու սպասկերագործ խատիրով գարգարող («Քի՛ման», 1, 63), բայց վրացերեն հիշատակարան չի թողնում (չհաշված որմնակարհերի վրա եղած մակագրությունները): Նշանակում է, չի կարելի վրացերեն արձանագրությունների գլուխվազը բացատրական բաղկերջականութվամբ բացատրել: Այն բացատրելի է թվարկված բոլոր հանգամանքների հանրագումարով⁴⁸: Վասա՛հորեն բաղկերջականութվան հետ գրծ ունենք, երբ այզպի-

սիք վիճազրված են պաշտամունքային կառույցներին ու հաստատություններին առնչվող շարժառիթներով: Այսպես, օրինակ, Ախթալայի, Քորայրի, Կիրանցի, Հունեցի եկեղեցիներում որմնակարհերի և, մասնավոր, վրացերեն մակագրություններ ունեցող որմնակարհերի առկայությունը բաղկերջականութվան բավարար ապացույց է, մինչևեռ Օրբելյանների, զոտի Չեչյանների, Արուիթյանների վրացերեն վիճադրիչ պայմանավորված է նրանց վրացի լինելու հանգամանքով: Չմոռանա՛ք, սակայն, որ վրացի Օրբելյաններն էլ երբևե՛ն հայերեն հիշատակագրություններ էին անում, որի ապացույցը Սահա՛հի նրանց միարանական արձանագրությունն է:

Որքան էլ վերապահություններ անենք, այնուամենայնիվ՝ Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների նշանակալի մասը հայ բաղկերջականների, մասնավորապես վանականության, անվան հետ է կապված: Բայց միզ զբաղեցնող ոչ թե հարցի Բրիտանասարանական կողմն է, այլ, հուսկանալի է, պատմական-մշակութային: Այդ իրողության եկատատումը մեծապես նպաստում է հիշարային կողմանց հայոց վարդապետաց՝ զործունեությունը, նրանց շատ աշխատությունների երևան գալու շարժառիթն ու նպատակը ճշտ բնկալելուն ու բացատրելուն: Գա՛վանական հարցեր բնմարկին էլ խորատես ու իրատես զործիշ-մատենագիրներն ու միայն չէին բնկողմանում հայ-վրացական պետական-քաղաքական միասնականութվանը, այլև նույնիսկ փորձեր էին անում համառող քննարկումների միջոցով՝ միացավանութվան հասանել (հիշենք Լուսի, Անիի ժողովները): Հիշյալ առումով բացառիկ կարևորություն ունեցող աղբյուր է Մխիթար Գոշի «Թուղթը» Չարարյան կարայրներին և վրաց բարձրաստիճան հոգևորականութվանը⁴⁹, Իմանալով հանգիստ եղբայրների հակումը («Տասանելի թուիլով՝ ձեզ սասցալարն առ ի նոցանը»), Գոշը նրանց կըլ է անում դավանութվան շարք եղած վեճերը շիջուցանել իմաստութեամբ, և հասանել ինչիս, թէպէս և անհնար ցուցար գնդողով լինել և զմիարանութինն» (էջ 497): Նա շատ կողմնառ, որ ամենայն ազգ միեկրան լինէր», բայց բանի որ դա անհնար է՝ «լու համարեցար որ զմիժեանն շիջանամենք», անգամ հակված է կարծելու, թե վրաց հոգևորականները «նուսումներին լսելով» է, որ բանավիճում են, օստի, «Մի, սիրելիք առառույշ, լսող լինիք թշնամեաց մերոց, զի չկալ ի Հայք հերձած» (էջ 498): Գոշը հավատացած է, որ «բարեկաշառ թագաւորս ժեր»... Թամբն և Գալիթ» կարող են «թշնամութին բանալ», որովհետև «և որքա նախանձարին խաղաղութեան և միտլ առ միժեանն հաստացելոցս...» (անդ): Գոշը հավատում է և Չարարյան եղբայրների իշխանական գորութվանը. «Ձի զուր իշխանք էր հայոց և վրաց կամարն առառույ, և թե կամարն՝ ծանուցանելը աստուածաւոր թագաւորացղ (Թամարին և Գավթիկն)—Պ. Մ.), որ արբարական իշխանութեամբ ասաց զնեն... և հաստատուն անցինցն զթագաւորութիւնն ինքեանց՝ բուրի շառանդան, զեղեցիկ ամբուսակալան, ի խաղաղական կեանարք և յաղթութեամբ պատերազմեաց և բարեկաշա-

⁴⁴ Jean Mécérian, Նշվ. աշխ., էջ 111—112:
⁴⁵ Այդ մակագրություն է Երեանի կաթողիկոսի վրա եղած նրա արձանագրություն անեթի բանասկից:
⁴⁶ H. Mapp, Նշվ. աշխ., էջ 93.
⁴⁷ Տեղին է վկայաբերել ահպ. Ն. Քերանձվիլու նորերս հրապարակված գիտություններին մեկը. «Սեյ վրացական Եճով ու վրացական արձանագրություններով եկեղեցիներ էրն կառուցվում Հայաստանում (Շահիճ), կարիկպատմություններ էրն չեմբում՝ Կարի, Գլմի (7—9. Մ.), Հագարչահերի, Անի, կամ կաթողիկոսություն՝ Գագասանում կամ Սեթի-Ալանում (Քորայրերի), [այգա] այն կառուցում էրն ո՛ր վրացի միտներները, ո՛ր էլ Կրասանի թագավորական իշխանութվանը, այլ անգամ ավատարիական հասարակությունը, որը այդ նշանով վրացականություն էր բնկալում: Սակայն նրանք այս վրացականության մեջ այլևս անկեղ առաջ վրաց ավատական մշակույթ էրն հասկանում...

⁴⁸ Տվյալ կոնկրետում հատկապես ուշագրավ է դառնում տուլչիի ազգականութվան աղբյուրն համառարծ բաղկերջականացուցը 10—11-րդ դարերում: Քարթլիի ավատական մշակույթը, կրում է, սովոր էր աղջում տուլչիի «Նայցը վրա եթն ոչ ալա, դավանական տեսակետի անբարենեկ՝ բաղկերջականությունն այնտեղ ինչու պետք է առնվիք վրացութեանը և ոչ հունիերին՝ Տալցեի ինչու էր զույն ջովագնեռ հանուն Եճացականութինն, երբ հույնութեանը նրա համար շատ ավելի հեռավարային կարող էր լինել... Սույն հարցը էթնիկական ազգակցութվամբ բացարձակ անհարակ է:

⁴⁹ Այնպես որ՝ շատ ավելի բնական է «Տալցե» այս դավանական դարձը, այսինքն՝ «Վրացականութեամբ մենք բարտարենք վրաց ավատական մշակույթի արտաճան հիմքի վրա, որ բաղկերջականությունը մեկ ակններն նշան էր, բայց ոչ վանական և այս նշանն անբնական ավելի ու ավելի բնկ կարողութեան էր դառնում, ինչպես Եճանեմալորես կուլտուրան ավելի ցայտուններն էր վերածվում (Եճացություն)՝ կովկասի միջազգային մշակութի...» (Տ. Նոյմենց-Նեղոս, Նշվ. աշխ., Ծ. VII, տձ., 1974, թթ. 91—92): Վկայադրված հաստատիքը բնագրում, սակայն՝ հրատարակված լինելու պատճառով, կան որոշ անհարթություններ, զույցն և անհարթություններ:

⁴⁹ Տե՛ս «Արարատ», 1900 թ., էջ 497—504, 562—568, 1901 թ., էջ 55—61, 121—127:

սուրբհամբ կեալ շաշխարհի, հանգերձ քրիստոսաւոր իշխանաւոր՝ քաղցր կամաւք և իրաւամբ... (Սեբաստա, 1901 թ., էջ 127):

Մխիթար Գոշը, փաստորեն, վրաց և հայոց թագավորութեան հաստատութեանը, հաղթանակներն ու ապահովութեանը գտնում է «միմեանց հաւանելու», հանդերձողականութեան և սեփական ավանդներին հարազատ մնալու իրավունքի մէջ, իր իսկ բառերով՝ «կալ յիւրաքանչիւր կարգի ամենայն ազգ» (էջ 125):

³⁹ Տե՛ս Կարո Ղաֆազարյան, Երևան (միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները), և., 1975, էջ 47, 185, 188:

նադրի թարգմանություն է ներկայացրել, կարելի է հշտալիամբ կուհեկ վերականգնելքը:

1. «Կոնդի գերեզմանոց, Կոզեռի մատուռի ամ մուտքի մոտ, պատի տակ».

- 1 Այս է տապան Քիվիզ-
- 2 Էջի Անդլենեց
- 3 Անշափին, որ է օրդի
- 4 Նախմանի: Քվ: ՌձՆԿ (—1714 թ.)

- 5 Ճ. յեց ևտղ [եց] յո ճարձո-
- 6 Յ[ա]ն Յեղո ճննայ <ձ>
- 7 [Եղոլեղեղևն օրն.
- 8 Բլլևն հեղև-ևլ.

Ե I (23)

Քարգմանություն այստեղ ավելորդ է, որովհետև վրացերենն ինքնին թարգմանություն է հայերենից, մասամբ համատոգված (չիս կամ չի եղել Անդլենեց—ճեղճեոտ տոմանունը):

2. «Կոնդի գերեզմանոց, ...տապանաբարի հարթ կերպն».

- 1 Այս է տապան Քիվիզ-
- 2 Էջի Խէլկենց Թա-
- 3 Բիլիին, որ է օրդի Ռն-
- 4 անին: Քվ: ՌձՆԿ (—1715 թ.)

- 5 յեց ևտղև [եց] յո յե-
- 6 և յեց Եղի յ[ա]ն Յեղ [լո]
- 7 և յ[ա]նն յ[ժև]ն Նաթիսևն.
- 8 [Բլլևն հեղև-ևլ].⁴⁰

Ե II (24)

Հայրեն մասի համեմատությամբ վրացերենում կա երկու ուշադրավ ինքնատիպություն. Քիվիզցի-ի փոխարեն այստեղ գտնում ենք մուխալե (բաղաճախ), իսկ Խէլկենց տոմանունը փոխանցված է Խէլիկաշվիլի (սպասելի էր՝ Եջմ. յեց ևտղ—Խէլկանթ): Այս եզակի օրինակն իսկ մատնացուցում է, որ 17—18-րդ դարերի վրահայոց պատմությանը վերաբերող վավերագրերը թարգմանելիս կամ մեկնարանելիս անհրաժեշտ է պահանջվելիք զգուշություն ցուցաբերել՝ տոմանունը, հայրանունն ու ազգանունը միմյանցից հստակ զանազանելու համար:

⁴⁰ Երկու արձանագրության Անտաքի ընդօրինակությունը տե՛ս Եջմ. աշխ., էջ 164 և 185:

Կ Ո Շ

Կոշի եկեղեցու պատին եղած վրացերեն արձանագրության թելադրանքով է պայմանավորված Մ. Բրուսեր մոտ կառույցս «Փյունըխիս» կոչելու պարագան¹։ 1893 թ. Հայաստան այցելած Ն. Մաոբ նկատում է այդ արձանագրության գոյությունը, բայց հանգամանքների բերումով ստիպված է լինում նրա ընդօրինակությունն ու ուսումնասիրությունը հետաձգել։ Տասնամյակներ անց նա գրում է. «Վրաց ազդեցության տակ աճած ուշ հայկական քաղկեդոնականության նկատմամբ զոյացած հետաքրքրության կապակցությամբ անհրաժեշտ էր ընդօրինակել էյմիսանից 18 կմ հեռավորության վրա գտնվող Կոշի հայոց եկեղեցու վրացական արձանագրությունը, որ նա նկատել էի տակավին 1893 թվականին, բայց չէի ընդօրինակել հիվանդության պատճառով։ Շտապելով Սվանեթ, [1913 թ. պեղումների ընթացքում] ես անձամբ չէի կարող այդպիսի ուղեորություն ձեռնարկել [ղեպի Կոշ], նրա կատարումը հանձնարարեցի Հ. Ա. Օրբելուն² Ա. Վրույրի և ուսանող Գ. Չխատյայի հետ միասին։ Չափազանց հետաքրքիր են այդ ուղեորության արդյունքները. միայն լուսանկարահանումները հասնում են 85-ի»³։ Հ. Օրբելու թողած ձեռագիր մասնագրվածը ծանոթ մասնագետները տեղյակ են, որ հանգուցյալ գիտնականը վերձանել է Կոշում գտնվող բոլոր արձանագրությունները և մտադիր է եղել ապագայում հրատարակության պատրաստել⁴։ 1913 թ.

պոստուսի 4-ին Ն. Մաոբն հասցեագրած նամակում Հ. Օրբելին ընդօրինակում է Կոշի վրացերեն արձանագրությունը և հաղորդում, որ երկրորդ արձանագրությունն նա կա՛ն Այծի, Խհարկե, Խմաստ շունի անդրադատելու Հ. Օրբելու վերանուսխան լավ ու վատ կողմերին, քանի որ այն նախնական աշխատանք է։ Նա ինքնուրույն միավոր է գիտել արձանագրության առանձնակի փորագրված մի հատվածը։ Գիտնականի արխիվում գտնվեց և այդ վերձանության տպարանային շարվածքի սրբագրական օրինակը, որը էական տարբերություն չունի նամակում եղած տեքստից և հետո է հեղինակին վայել վերձանություն կոչվելուց⁵։

Կոշի վրացերեն արձանագրության վերձանությունն ու հրատարակումը վիճակված էր իրականացնել ակադ. Ա. Շանիձեն։ 1924 թ. մայիսին Թրիխիի պետական համալսարանի նախաձեռնած զիտարշավի կազմում⁶ նա լինում է Կոշում, ընդօրինակում այն և տասնամյակներ անց, անհրաժեշտ ներածականով ու ծանոթագրություններով, հրատարակում է ՄՍՀ ԳԱ ձեռագրերի ֆնաստիտի «Տեղեկագրում»⁷։ Հենց սկզբից ստե՛նք, որ Հայաստանի տարածքում պահպանված վրացերեն արձանագրություններից ամենահազոդ ու ամփոփ հրատարակության արժանացած Կոշին է։ Խոսքը ոչ միայն լուսանկարի ու զբանկարի առկայությանն է վերաբերում, այլև ընդդրինացական նկարագրությանը, տեքստում գործածված տերմինների քանակությանը և պատմա-բանասիրական օժանդակ նյութի վիպակոչմանը։

Վրացերեն արձանագրությունը վիժագրված է դուռդվերի միանավ աղբյուրատան-եկեղեցու հարավային պատին, արևելյան վերին անկյունում, բիվին հարող երկու շարքի վրա⁸։ Այս եկեղեցու շրջապատում է եղել Կոշի հանդառարանը, իսկ բուն դուռդվերի ընկած է նրանից հարավ-արևելք։ Այդ հետաքրքրող արձանագրությունը լավ է պահպանվել, ամբողջական է ու Տեսուխ։ Վնասված է երկրորդ շարքի մի երկու տասանիչը, որտեղ հեշտ վրականգնելի են⁹։ Ինչպես հիշտ նկատել է Ա. Շանիձեն, արձանագրության

⁴ Այդ նամակը, ինչպես և Ն. Մաոբի ու Հ. Օրբելու ոչչ գրագրությունը մենք հրատարակել ենք՝ «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, էջ 282—306։

⁵ Օրբելին զգացել է այդ, ուստի և ձեռնդած է մնացել հրատարակուցից։

⁶ Այն է՝ Գ. Չխատյայի (Նախագահ), Ա. Շանիձե, Ա. Մելիքթե-Քեկ և Հարատարակու Ն. Սևերյո։

⁷ А. Г. Шанидзе, Грузинская надпись XIII века в сел. Кош, «Методы», I, 1929, стр. 7—19։

⁸ Ա. Շանիձեի հոգովմում վերլուծումը գրված է եկեղեցու հյուսիսային պատի վրա (նշվ. ախտ., էջ 7)։

⁹ Կոշում տեղի ունեցած հայ-խորթական, իսկ «Նաագայում» քաղաքացիական կռիվների ժամանակ այս ու մյուս եկեղեցիները պատարար են մտնայել, ուստի նրանց պատերին հրաձեղությունից զրոյացած վնասվածքներ կան։ Վրացերեն արձանագրության երկու տասանիչի կորուստը նա փամփուռայից ստացած փոսիկով է պայմանավորված։ Սույն եկեղեցուներին ժամին տուրբերա հեղինակին պատմեց ս. Գևորգ եկեղեցու պահպանություն ինքնակամ ստանձնած 86-ամյա մի կոչեցի, որը այդ ամենին ակնատես է եղել։

¹ Տե՛ս «Mélanges Asiatiques», t. V, p. 118. Կոշի նուսխանները հրատարակող Հ. Շանիձեյանը նման անուն չի հիշում, ինչպես որ ծանոթ չէ և արձանագրության գոյությանը (տե՛ս նրա՝ «Մտորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւուսցն Արարատ», հ. 2, էջմիածին, 1842, էջ 62—65)։ Կոշի մասին խոսելիս Պ. Ալեկյանի հիմնական աղբյուրը Հ. Շանիձեյանի լախատությունն է (տե՛ս նրա՝ «Այլարատ», Վննտիկ, էջ 145—146)։ Գարակոչբի նաև գոյություն է ունի և վրացերեն արձանագրության առկայությունը հիշատակել է Ք. Վեյսելը (տե՛ս նրա՝ «Материалы для истории грузино-армянских отношений» СПб., 1904, էջ 73)։

² Н. Я. Марр, Ашх, стр. 123. (տեսնակարների թվի մեջ վերջում կա. այդ ուղեորության մասնունկ, բայց Օրբելու նամակի, «сняты в общем 57 фотографий») (տե՛ս «Հայագիտ. հետազոտ.», Ա., 200)։

³ Արձանագրությունները ընդօրինակված են մատուցով և նրանց հրատարակություն պատրաստելը այժմ տեղում վերձանելուց պակաս շանք չի դասնեցում։

ա) Կոշի արձանագրության մեջ Նաճեցցլո է և ոչ Յլտօնօ. Որևէ հրաշխիք չկա, որ այդ տերմինը անպայման գուրան հասկանանք և ոչ՝ առաք, մասնավոր իր օրավար շափի միավորի հիմքում արտավարն է ընկած, գրեն վաղ շրջանի համար¹⁸:

բ) Արձանագրությունը գրված է Արագածոտնի Կոշ գյուղում, այն էլ, ինչպես Ա. Շանիձեն է նկատում, Քերես վրացիներին ոչ շատ հմուտ հայի կողմից¹⁹ (այդ վիպակում է առկա ռճական անհարթություններից), ուստի տերմինի իրական նշանակությունը ճշտելու երակեա պետք է ունենալ սակում գործածական նորմը, որով անհավանական է դառնում գուրան և այտակոցի²⁰ մեկ օրվա գուրանավար մեկնարանությունը: Արագածոտնում շափական միավորը օրավարն էր, արորով հաշված:

գ) Ա. Շանիձեն գրում է, որ էթև Նաճեցցլո տերմինը հասկանանք իբրև հողի շափի միավոր և հավասարեցնենք նրան փոխարինած Յլտօնօ և Ջլտօսօ տերմիններին, այսպես նրա տարածքը Կոշի պայմաններում կլիներ, հավանաբար, շուրջ 0,7 հեկտար²¹: Արցախ հնարավոր բան է, որ Իվանենն ու նրա կենդ կոշեցիներին ազատին երկու ժամը հարկից՝ շարխարից ու ցորենի զալայից, դիմացը ստանալով ընդամենը 0,7 հեկտար հող, կր վերջինիս բերած եկամտաբ Կոշի պայմաններում պարզապես շնչին էր լինելու²²: Այդ մասին նույնիսկ զգվար պիտի լինեն հատուկ արձանագրություն Քոշեկը:

դ) Արձանագրի հեղինակները մասնավոր կարգով շեշտում են, որ այդ սեռի օտարները մշտապես իրենց համար է լինելու: Հազիվ թե Զարբախաները առիթ ունենային մեկ-երկու տասնամյակ առաջ իրենց ազտագրած գյուղում կամ գավառում 0,7 կամ նույնիսկ 1 հեկտար հողի համար հարկային նման զիջումներ անել: Այդ հողը առանց զիջման էլ որպես իրենց սեփականություն էր ճանաչվում. էթև խոսքը հողային միավորին վերաբերել, այսպես մշտապես իրենց համար լինելը չէր շեշտվի, քանի որ այդ իրերին հասկանալի է:

ե) Մեկ օրավար հողի մշակումը մեկ գյուղի համար ընդամենը ժամերի աշխատանք է, ուստի նման մեկնարանության պարագայում անհասկանալի է մնում «ճեր կզով ու իր օրավարով» (սարբով)՝ արտահայտության անհրաժեշտությունը: Շատ բնական է, որ գյուղացիներն իրենց լծկանով ու գործիքներով էին այդ անելու: Նշանակում է, արձանագրությունը ավելի մեծ աշխատանք պետք է նկատի ունենար՝ այդ պարագան մասնավորապես շեշտելու համար:

զ) Եթև Նաճեցցլո տերմինի տակ օրավար հող հասկացվել, այսպես գյուղացիներին պատկանող լծկանի ու սարբի հետ միաժամանակ պիտի

¹⁸ Հմտ. Թ. Հ. Վարդանյան, Օրավարը որպես հողի մեկնարան շափի միավոր, ՊՁԷ, 1962, № 2, էջ 195:

¹⁹ Տե՛ս Ա. Շանիձե, նշվ. աշխ., էջ 9:

²⁰ Նույն աղբյուր, էջ 16:

²¹ Օրավարի շափերի քննությունը բոս տպագրության նյութերի տե՛ս X. Вермишев, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказ-

կողմից և գուրանը կամ առաք, որովհետև լծկանի սարբի մեջ մտնում են լուրը, սամիք, փոլը և այլն, բայց ոչ ամենահիմնականը՝ արքը կամ գուրանը: Ա. Շանիձեն օրինակներ է բերում խնտարական բառարանից, Գուրխայի երկրագործական տերմիններից և հավաստում « Քոժոն օճճօլօս (եզան սարբ) արտահայտության գուրանները՝ զուխան իմաստով: Բայց գիտելու է, որ խնտարական կամ գուրխական տվյալները զգվար է համարձակեցնել կամ նույնացնել Կոշում եղածի հետ և այսպես՝ արձանագրության ինտետե քլեճլտօս - ն վերաբերում է Նաճեցցլո - ին և ոչ թև չօնօ - ին:

Այսպես պատմաաղբարանություններով է, որ արձանագրության Նաճեցցլո - ն մենք հասկանում ու թարգմանում ենք առաք և ոչ օրավար կամ գուրանավար²³: Դրանով իսկ բուրյովին փոխվում են կոշեցիների սահմանած պարտույթի բովանդակությունն ու շափը: Նրանք պարտավոր են եղել ոչ թև մեկ օրավար հող իրենց եզով ու սարբերով միշտ պատրեմ համարձակել, այլ մեկ առաք իրենց եզով ու սարբով մշտապես գործել է պատրեմների համար: Ինչ խոսք, մշտապես գործող այդ մեկ արորը (մեկ մանը) անհամեմատ ավելի շատ հող կմշակել, եկամուտ կտար, քան որևէ շափի օրավար հողն է:

Արդարության դեմ շեշտելու համար պիտի ասել նաև, որ Ա. Շանիձեն վերագահություն է ստաշարել Նաճեցցլո - ն օրավար հասկանալու, իսկ հողվածի վերջում անհրաժեշտ է նկատել անդադառնալ, թև հիշյալ արտահայտությունը կարելի է մեկնարանել և այլ կերպ, թարգմանելով՝ а вы установили, чтобы один пflug с вашими быками и его (плуга) привадежностями был для нас²⁴:

Վերևում փորձեցինք ապացուցել, որ իրականը հենց այսպիսի ընկալումն ու թարգմանությունը պիտի լինի, միայն մեկ անհրաժեշտ սրբագրությամբ՝ пflug-ի (զուխան) փոխարեն բառ տերմինը գործածելով (վերջինիս կարող է ն՝ առաք նշանակել, և՛ գուրան կամ վեցկի):

Կոշի վրացիներ արձանագրությունը, ինչպես որոշ այլ նման հուշարձան-հիշատակարաններ, թվական չունի, ուստի նրանում հարորդված տեղեկությունները դեհաստելու համար հարկադրված ենք գրության ժամանակը ճշտել բոս օժանդակ աղբյուրների: Ակազ. Ա. Շանիձեն հիմնականում այդ արև է՝ վիտագրման ժամանակը սահմանելով 1214 թվականից հետո (Զարբախայի մահը)²⁵, բայց մինչև 1219 թ. (Իվանիկի ամբարնի լինելու

ского края, Тифл., 1887, т. IV, в. I, էջ 234—236, հմտ. Թ. Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 191—196:

²² Թարգմանության մեջ գուրան (գրաբ. գուրաչ) տերմինից խոսափում ենք այն պատճառով, որ բառս միջնադարյան աղբյուրներում հազվադեպ գործածություն ունի (տե՛ս ՆՁԲ, II, 1049), ինքն էլ արորի մի արարատեսակն է:

²³ Նշվ. աշխ., էջ 17:

²⁴ Վարդանը Զարբախայի մահը հիշում է հայոց 661 (1212) թվականի տակ (տե՛ս նրա՝ «Հատարան պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 140), իսկ բոս Ստեփանոս կարևոպոսի (Օրբելյանի) այն տեղի է ունեցել 1213 թ. (տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Կ. 1, Երևան, 1951, էջ 38, հմտ. էջ 55, ծան. 22):

վկայությունը Ավանի արձանագրության մեջ²⁵։ Եվ, հիբալի, Կոչում Իվանին իրեն կոչում է մանդատարիությունց, որին նա արժանացավ Զաքարիայի մահից հետո, իսկ դրանից առաջ մատարիությունցն էր²⁶։ Որ Ավանի 1219 թ. արձանագրության սախարիկը²⁷ որևէ առումով կասկածի ենթակա չէ՝ հաստատվում է Անիի Ասարիոց եկեղեցու 1220 թ. վիճադրով, ուր Իվանին կոչված է արարիկ, իսկ Զաքարիայի որդի Շահնշահ Ավագ-Ասարգոս՝ ամիրապետալար²⁸։ Իվանի արձանագրությունը 1213—1218 թթ.վականների ամսերում էլ զրգած, թերևս 1214/15 թվականներին, էրը Շահնշահը դեռ պատանի էր ու հիշատակելի՝ իրեն խոշարի սնուցած որդի²⁹։ Ընդ որում արձանագրության «Յեմնց և Յեմնա ժմտա յ լըլա ժմաճ» արտահայտությունը (բառացի՝ Շանշի ու նրա եղբայրների մայրը) պիտի հասկանալ իբրև pluralis majestatis, իմա՝ Յեմնա ժմտա — նրա եղբու, քանի որ Իվանին ու խոշարը մեկ որդի ունեին՝ Ավագը³⁰։ Հիշյալ արտահայտության փաստից ելնելով, Ա. Շահինին վարկածի կարգով այն միտքն է հայտնում, թե «Սիրենն խոշալթը ինչ-որ հիմք է ունեցել, մեկ ստույգ անհայտ, իրեն կոչելով Շանշի ու նրա եղբայրների (ընդգծումը՝ Պ. Մ.) մայր (Ավագի և Աղբուլայի ?)»³¹։ Նման հարցադրման պատճառը Թալինի 1267 թվականի

(իրականում 202—1307) արձանագրության³² վրիպյալ մեկնաբանությունն է Աղբուլայն (զրգված է Աղբուլազ) թողնել է պիտանյալ գինյ խալէլ վանս արեւտաորեան ամիրապետար Շահնշահի՝ կըրար ինյ և...» հոսսը վերադարձնել է ոչ թե Շահնշահ Ա-ին՝ Զաքարիայի որդուն (հիշված Կոչում), որ մահացել է 1261 թ., այլ Իվանի Բ-ի որդի Շահնշահ Բ-ին, մահացած 1320 թ., որ իբր իր եղբայրն էր (մյուս կերպարները՝ Վահրամ, Արտաշիլ...): Արձանագրության մեջ նա սուղակի առում էլ, որ ինք «թոնս մեծին Շահնշահին», է, որդիի Իվանիկ» (Իվանի Բ)։ Գիտնականը «Շահնշահը» տիպոս է ընդունել և վերագրել Ասարիս երկայնարադուկին, մինչդեռ այն իբրև տիպոս առաջին անգամ Զաքարիա ամիրապետալար կրեց, ինչպես վերջուր պարզվեց Կոչում Պետրոս Ականատարի արձանագրության վերածանկությունից, 1196 թվականից սկսած (կրկար ժամանակ այդ տիպոսը կրելու սկիզբն էր համարվում 1199 թվականը՝ Անիի պառտադրումը)³³։ Այնպես որ Կոչի վրացիներն արձանագրության «Յեմնա ժմտա»-ն միայն լեզվական իրադրություն է և նրանից Զաքարյան տան տունածուրս վերանայելու անհրաժեշտություն չի բխում։ Ի զույգ, մեր արձանագրության Շահնշահը Սանահնի վանքին տված իր հաստատագիր-նշիրագրում Զաքարին և Իվանին հավասարակու ծնողներ է կոչում. «...հրամանաւ ծնողաց իմոց ամիրապետալար Զաքարէն, ամբարակ Իվանի արարի զղանձագին հայրենիքս մեր...» (ԱՆ. № 3031, էջ 32է)։

Կոչի արձանագրության մեջ հիշատակված անձանց ինքնությունը պարզելու որևէ անհրաժեշտություն չկա, որովհետև նրանք բաց հայտնի են և այլ աղբյուրներից։ Գիտնելու է միայն, որ Իվանի կինը այսպես իրեն կոչում է խոշա և ոչ՝ խոշալ կամ խոշալ³⁴։ Գուցե լավ կլինեք գիտական գրականության մեջ հենց խոշա էլ կոչել՝ կանխելու համար նրա և նրա թոսան՝ Ավագի աղջիկ խոշարի նույնանունությունից բխող հնարավոր շփոթը³⁵։

Անդրադանումով Կոչում վրացիներն արձանագրության թողնելու փաստին, հարկավոր է նկատի առնել Զաքարյանների զործարքած ջանքերը՝

²⁵ Եզլ. աշխ., էջ 10 և 13։

²⁶ Ամիրապետալարյան աստվադուց հետո էլ Զաքարիան շարժանկում էր և մանդատարաբարությունց մնալ, ինչպես այդ վիպված է Լազարաթի 1210 արձանագրության մեջ (ան՝ս Ա. Պախաբալյան, Լազարաթ, Երևան, 1963, էջ 163)։

²⁷ Տե՛ս Ա. Պախաբալյան, Ավանի երկեղեցւան ժամկազի արձանագրությունը, Երևան, 1945, էջ 17։

²⁸ «Իվան», 1, 16—17։ Ափսոսանքով պիտի նշեք, որ նույն Ասարիոց եկեղեցու կիսատ դատակնիված և Իվանին վերաբերող մեկ այլ արձանագրություն հրատարակելիքների կողմից բրայվել է ոչ ճիշտ. Աթն Իվանին արարել է (այդ սիշու է կասկած նրա՝ առաջին հիշատակված լինելու փաստից), այդ ամիրապետալար Զաքարին (Զաքարիա) լինել չի կարող (նա վրացուց մահացած էր), այլ՝ նրա որդի Շահնշահը, որ հաստատվում է վերևում սակարկած արձանագրությունում։

²⁹ Վարդանի տեղեկությունը՝ 1212 թ. Շահնշահը սուղայ մի Նեղամանյ էրս (Եզլ. աշխ., էջ 140), որեմն 1207 թ. ծնված Լազիվ թև 1220 թ. 13-ամյա Շահնշահը ամիրապետալար դանաբու Վարդանի զրչազրում կրկին վրիպում կա։ Անտուն Աերասաուցու «Տարեգրությանց համանայն» Շահնշահը սուղա մի է ասացո էր (ան՝ս «Մեր ժամանակագրություններ», 11, 136)։ Սրմեն, Վարդանի մեկարում է՝> չմի է անկի անցելու Այդ նստատող կարծիքն որ վկայություն ունեց Լառմայի 1206 (ՈՅԵ) թվականի արձանագրության մեջ, ուր այսպիսի է. «...յամիրապետալարեան Զաֆառի և որդայ իրոյ նանկայնի»։ Սակայն Լառմի 1201 թ. (ՈՅ) արձանագրության շնորհիվ հայտնի է դառնում, որ Շահնշահը ավելի շուտ է ծնվել Զաքարիան որում է. սես Զաքարիա մանդատարիությունց ամիրապետալար հայոց և վրաց, որդի Անիի Ասարգի, գանձագին արարի գողակաուտ սուրբ ուխտս Լառիկա ի իր բնական հայրենասիրացն յալգարս կնկարտեմնան սնասն իմոյ բարեխալցս Քամար թաղուն և և փրկութեան ինձ և հարգազա կըրար իմեյ Իանիկ և զսակալց մեղց նանկայնի և Ասղին և ծնողաց մերոց...» (Հ. Նիկոլաբալյան, Լառիկա վանքը և նրա վիճադրությունը, «Էջմիածին», 1957, Ա, էջ 59)։ Սրմեն՝ Վարդանի մյուս պիտի ունենային «սն (կամ ժե) ամանայ։ Ամիրապետալար գանձագին Շահնշահը կել է 23—25 տարեկան։

³⁰ Հմմտ. Ա. Գ. Շամաձե, Եզլ. աշխ., էջ 11—12։

³¹ Եզլ. աշխ., էջ 13։

³² Հրատ. ան՝ս «Վիճակն ասրիկեր», կազմեց՝ Ա. Կոստանյանց, Մանկա-Պետերբուրց, 1913, էջ 110—111)։ Կան սխառներ, այդ թվում՝ 202-ն կարգադրել է ԶԺԸ. սղպում ենք վիճադրացես Ս. Ավագյանի սրտմտագրած լուսանկարից։

³³ Տե՛ս Ա. Ա. Շահինյան, Կոչի կրթողը և նրա արձանագրությունը («Մատնա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 198 և 201)։ «Շահնշահ» տերմինի զույգությունը ժամանակին կատարել է Մխ. Տեր-Սիրաչյանը (ան՝ս նրա՝ «Մեր քանի հին արձանագրություններ», «Zeitschrift für armenische Philologie», B.-d. II, Hef. 1, Marburg, 1903, S. 44)։ Հիշյալ 1199 թվականը ամենին վերանայելի չէ, քանի որ Անտուն պատկանելի է Սուլթան Շեղադուկի պորտիներն արձանագրությունը զրգված 1198—1199 թվականներին (ան՝ս Լ. Ե. Գյուզալյան, Персидская надпись Кей-Султана Шеддани в Ани, «Академику Н. Я. Марру», М.—Л., 1935, էջ 633, 641)։ Որոշ շեղումներն ան՝ս V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, թ.թ. 74—106)։

³⁴ Եզլ. աշխ. — խոշա զրոթյան բուցադրությունը ան՝ս Ա. Գ. Շամաձե, Եզլ. աշխ., էջ 11։

³⁵ Կրակց մասին ան՝ս Գ. Լովսեկյան, Զաքարյանի ժողովրդատյանը, Էջմիածին, 1913, էջ 22—25)։

Արագածունք ազատագրելու համար: Զարբրիա և Իվանն եղբայրները այստեղ հայերեն բազմաթիվ հիշատակարաններ են վիժարել: Երանք Արագածունքի առաջին անգամ տիրացել են 1191 թվականին, որի վիչայու-
թյունը այդ թվականին Փարսիում Զարարիայի թողած արձանագրությունն է³⁶: Ա. Շահինյանի արդարացի կռահմամբ, Զարբրյանները այդ ընթացքում չեն կարողանում գրավել Անրեղը, ուստի ետ են բաշխում³⁷: Այդ ամբողջյան նվաճումը տեղի է ունեցել «հին տարի անց» 1196 թ³⁸: Եիշա է, Ա. Շահինյանը փորձեց վերանայել այս թվականը, հիմք ունենալով Կոչում Պետրոս Ակնախտեօի կանգնեցրած կոթողի արձանագրության տվյալները (1195 թ.³⁹), բայց դա պարզապես սխալ հաշվարկման արդյունք է: Պետրոս «Նոզո ակամբ» պառարաններին տեսել է ՈՒԻ (1175) թվականին, իսկ «եմ մին այդ [տար] իսուարեցաւ արև[գահի]», որ նշանակում է Նաչուր տարին 1176: Եվ իբրք էլ այդ տարին խափարում է եղել⁴⁰, լրիվ խափարում (1176 թ. ապրիլի 11-ին), որի մասին խոսում է Գ. Քորայրեցին⁴¹: Պետրոս Ակնախտեօս այնուհետև ճշտում է, թե սղորդեցաւ երկիր, և յլես Ի (20) ամի տեսի Զարբաէ և [Իւանէ]», երբ սարեցաւ երկիրս մեր և պայծառացան եկեղեցիք Լաչաւս-տանանցս»: 1176 թվականից անցել է 20 տարի (=1196) և Զարբրյանները ազատագրել են երկիրը՝ Արագածունքն⁴²: Թերևս այս անգամ էլ, պարզա-
նների թիվադրանքով, նրանք երկուսը չեն նմացել զավառում և Արագածունք նորից անցել է ազախնայածին որդան Տարբարոս⁴³, վերջնականապես առաւ-
վելով միայն 1199—1200 թվականներին, ինչպես հավաստում է Անրեղոյի մատուցներում կանգնեցված խաչքարի արձանագրությունը⁴⁴: Իհարկե, Զարբրիան կամ Իվանեն նշանակալիորեն պիտի թեթևացնեին տեղիս ընտելությունից դանձվող հարկերը, բայց ոչ վերացնեին: Վերջին կարգի արտոնագրեր նրանք կարող էին տալ եկեղեցականներին, ինչպես որ դեռ 1191 թ. Զարբրիան «էր ազատ արարել զՓարսոյ իրբցանիրս յամենայն հարկէ»⁴⁵:

Արագածունք ազատագրելուց հետո Երկայնաբազուկ եղբայրները հարկերից ազատել ու նոր կալվածներ էին նվիրել և Կոշավանքին, առ այդ թողնելով այսպիսի մի արձանագրություն. «Ես՝ ամիրսպասապարս Զարբրիա

և Իւանէ կամար և ողորմութեամբն Քրիստոսի առաք զերկիրս Լաչոց ու տակեցանք հայրենի աշխարհս մեր: Յայս ժամանակիս տեսա՛մ զվարդապետս Պետրոս՝ սպասաւոր սրբաց ճշմարիտ և... և աղարարաւ, և տեսա՛մ ի սուր ուխտս գեղեցիկ՝ որ իւր բով և հանդովն և լեւամբ և զաշտով, և... վիստին դարձուցա՛մ ի սարբ եկեղեցիս և աղբիւրն Աստու: Եւ զինչ հայրենիք կա ի զատախ՝ ազատ յամենայն յարկէ և [հաստատակեցա՛մ] հայրենիք սմա և հողերս զալակացս, որ առ յաիտեան: Եւ վարդապետս միաբանս հաստատակեցի... ինձ և ի յիշումն հողից արքս զառաջ խորանն ինձ Զարբրիայի և այլն՝ հասարակաց պատարազել զՔրիստոս»: Զարկերի թիվնայումը տեղի էր ունենում աստիճանաբար, երբեմն այս կամ այն հարկատեսակը վերացնելու (իմա՛ թողնելու), երբեմն էլ այլ հարկով փոխա-
րինելու: Ինչպէս Կոչի վրացիներն արձանագրության մեջ առկա են հիշյալ երկու եղանակներն էլ, Իվանեն կոչեցիններին թողու-ազատել է Վերին հանգամանի շարխաթից, իսկ Վարի հանգամանի անշուքյանք միայն ցորենի զալաթից է ազատել, այդ երկուսի դիմաց սահմանելով մեկ արտը մշտապես իրենց համար զործելու պարտույթ: Թեև վերջինիս ստույգ նյութականացված արժեքը մեղ հայտնի չէ, բայց, անշուշտ, նշանակալիորեն պակաս պիտի լիներ, քան Վերին սահմանի շարխաթն ու Վարինի՝ ցորենի զալանն էին միասին վերցրած⁴⁶: Ն. Մատի, Հ. Մանանդյանի, Ս. Եղիազարյանի, Ս. Հակոբյանի և այլք ուսումնասիրությունների շնորհիվ շարխաթ արկատե-
սակի հետ կապված կարևոր շատ հարցեր լուծված են⁴⁷. այն հողից, հացից ու հացարույցից, ալգիններից, անասուններից, բամբակից, յուղից ու մեկից ավատատիրոջը արդյունքով կամ դրամով արժող հարկ էր, արդյունքի 1/10-ը լափով (գրեթե 13-րդ դարում այդպես էր, քանի որ Սահմադիրը 1284 թ. մասնավորապես հիշում է, թե «թողար զՄերենոյ տասնակն հացին, որ է շարխաթն»)՝ Պիտի ենթադրել, որ Իվանեն ու Խոշան կոչեցիններին ազատել են «Վերին հանգամանանի» հալային շարխաթից, այսպես նրանք կրտսնափորեցնեին, թե խոսքը հողից ստացվող որ արդյունքի մասին է, ինչպես այդ արել են «Վարի հանգամանանի» անշուքյանք: Բայց այս պնդումը ազդեան երանք այլ հարկանում են սալխա՝ դրախտ, որի հետ կապված որոշ հարցեր դեռ պարզված չեն՝ նոյս դրամներ, որ վրացիներն արձանագրու-
թյան ԾՁԾԶ ընթերցումը որևէ կասկած չի հարուցում: Թեև Ծ -ի գոյացած փոստրակից վիսալի է, բայց պահպանվել է նրա վերին հատկանշական կիսաղիզը, և Ա. Շանիձեի վերականգնումը միանշանակ ճիշտ է: Ինչ վերաբերում է բառուվերջի կրտսնայն ա-իս (հյ. յ), այդա թերևս դրոմ ունենք ոչ այնքան վրացիներն օ—ա հնչյունափոխության, որքան հայերենում

³⁶ Նոր հրատ. տե՛ս Ա. Ե. Շահինյան, Եղվ. աշխ., էջ 200—201:
³⁷ Տե՛ս անդ:
³⁸ Վարդան, Եղվ. աշխ., էջ 138, «Մանր ժամանակագրություններ», II, 136:
³⁹ Ա. Ե. Շահինյան, Եղվ. աշխ., էջ 201—202:
⁴⁰ Տե՛ս Հ. Ս. Բաղդյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 494:
⁴¹ Տե՛ս Վ. Զակարյան. Գալիթ Փորայրեցու հիշատակարանը (սենդիագիր, 1952, № 8, էջ 115 և 119):
⁴² Որեմն, արձանագրության թվականը պիտի վերականգնել ոչ թե Ուե՛ր, այլ՝ Ուն:
⁴³ Ուշագրավ է Ա. Շահինյանի այն ենթադրությունը, թե Արագածունք պատկանել է Անիի Շեղադյաններին (Եղվ. աշխ., էջ 202):
⁴⁴ Նոր հրատ. տե՛ս Ա. Ե. Շահինյան, Եղվ. աշխ., էջ 199—200, մատենագրությունը՝ անդ, ծան. 12:
⁴⁵ Անդ:

⁴⁶ Այդ պարզորոշ բխում է արձանագրության շարադրանքից, որ ավելի շատ խոսվում է լողնելու մասին, քան սահմանելու:
⁴⁷ Գրականությունն ու բնութագրերն տե՛ս Ա. Ե. Զակարյան, Լաչ գյուղացիության պատմու-
 րան, Երևան, 1957, էջ 402—409:
⁴⁸ Ի. Օրբելի, Надписи Мреца, «Հայագիտ. նշագրատ.» Ա, էջ 39:

բառավորելի բաց վանկի ա-ից հետո յ կիսաձայն գրելու ընդհանրական այլանդրվիք հետ⁶¹: Այս տերմինը եւ, 11-րդ դարից սկսած, անձանոթ չէ Հայաստանի վիճագիր արձանագրություններին: Պրոֆ. Ս. Հակոբյանը մասնագրություն է բաղդա արձանագրության վեց վկայություն⁶²: Երանցից մեկը Աբու Անիզի՝ Անիի մզկիթի պատին թողած պարսկերեն արձանագրության Ղ. Ալիշանի թարգմանությունն է⁶³, որը, ինչպես Անիի արձանագրությունների մասին խոսելու Ենչեցիքը, ամենակին ստույգ չէ: Պարսկերեն բնագրում սոված է՝ *دانشگاه جزی جزی و طرح و تاجری* — *ս ոչ մի արարածից դպանի, նեմարի, թարճի ու այլ պարսկակով ոչինչ չուզեն*: Ուրեմն խոսքը դպան հարկի մասին է և ոչ՝ խալա-խալե⁶⁴: Սրբազրելի է նաև Սահմանի 1273 թ. Մրենում վիճագրված արձանագրության խալալը. «Վիճական տարեգրում», որից որսվել է Ս. Հակոբյանը, անկա է «ի խալալ և յերթոյ հարկէ»⁶⁵: Ակազ. 2. Օրբելու հիշյալ վերձանության մեջ ունենք. «ի հալալ և յանկուղ հարկէ»⁶⁶:

Բարբախտաբար, Մրենի արձանագրությունների ախտակներինց մեկում պահպանվել է այս նշանակալի հիշատակարանը, որի ուսումնասիրությունից պարզվում է, որ սրբազրելի են անկա բոլոր վերձանությունները. այնտեղ վիճագրվում է «...այսինքն Մրենս ևս Անշականս ի խալալ և յրղ հարկէ...»⁶⁷: Խալ և անմինի նշումային հետո նկատվում են, որ յրղ կրճատարության բացումը իբրև յանկուղ չի պահանջարկնում: Ե. Սարգսյանը զգուշության թևկարաներով այն չի բացել (թողել է՝ յրղ), Ղ. Ալիշանը կարդացել է յեռուղ, որ ավելի ընդունելի է, քան Հ. Օրբելու առաջարկած յանկուղ-ը⁶⁸: Մի խոսքով, խալը տերմինը հայերենում վկայված է

⁶¹ Երբեմն եռյնիտի հրամայականով գրված կարգու-ն գրվում է կարգալ: Մրենաների վկայությունները տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիճական արձանագրությունների հայտնաբերումը, Երևան, 1973. հայտնաբեր. առիտակ

⁶² Ս. Ե. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 419-421: Կրճատան այբուբենում ճառն տերմինի անդրակցի գործածության հանդիպում ենք 893-918 թվականների միջոցին գրված Վերմոզիմի հարկադրում (տե՛ս «Վերմոզու կանոնակարգի փայլագրում», Խ. տե՛ս, 1966, թջ. 4):

⁶³ «Տիրիազ», էջ 56:

⁶⁴ Ա. Տանինի հոդվածում հակասակ է տեղի ունեցել. Քալինի 1267 թ. (resp. 1307) արձանագրության բնագիրը վկայակոչվում («...թող գիմ հայրենի գեղիս՝ զՔալան գեղու խալէ վան...») հայրենի որոշյալ աման ե-ն ընդունել է իբրև արձատիան, ուստի թարգմանել-ստուգարակ է կալալ-ը յեռուղ — ճալ (նշվ. աշխ., էջ 13), մինչդեռ դա խալալ-խալի հարկն է:

⁶⁵ «Վիճական այբուբեն», էջ 116, նույնի է՝ Ե. Սարգսյան, Տեղագրություններ..., էջ 198, Ղ. Ալիշան, Երթազ, 139:

⁶⁶ «Надписи Мрена», стр. 39.

⁶⁷ Խալալը ընթերցումը խալալ է սրբազրելի գեղ Քազ. Ավագյանը նշում է (տե՛ս նրա՝ «Հայտնական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 394, ծան. 122): Հմմտ. «Հայագիտ. հետազոտ.» Ա, էջ 381:

⁶⁸ Քազ. Ավագյանը նշում է սրբազրելի իր խոսքերով թե՛րևս անբռն է կարգալ (տե՛ս նրա՝ «Երթազ», որ Անգրի տակ յուսանկար յանկանալ պահանջով առաջացած թյուրիմացություն է (նշվ. աշխ., էջ 395, ծան.):

Անիում (Արլագրիի եկեղեցի, 1036 թ.)⁶⁹, Քալինում (1307 թ.)⁷⁰, Մրենում (Սահմանի 1273 և 1288 թվականների արձանագրությունները)⁷¹, չորս անգամ⁷²: Սահմանի վիճագրերում խալէն վերաբերում է այգիներին («այգիքն Մրենս ևս Անշականս ի խալալ...») համ այն և՛ ստացած գինուն («...թողար վեկեցն գինս և խաղողի խալէն»), ինչպես որ Արլագրիում Քալինում («...թող յ...գՔալանց գինոյ խալէն...»): Այստեղից Ս. Հակոբյանը իրավացիորեն եզրակացնում է, թե խալէն այգիներից, պղպատած ծառերից, սղեկից խմիչքներից գունեղու հարկն է⁷³: Ես միամտամանակ նկատում է, որ ըննությունից դուրս է մնում Անիի արձանագրության սեղեկությունը, ուր սոված է... հալած եղև ինձ՝ տեսան Պճարոսի հայոց կաթողիկոսի տալ վաչգին Աշնիկ... Արզ, տուար (դաչգիս-Պ. Մ.) որմով և ծառով՝ պղպարերով և անպղպար, և խոտագինով և Գ արբ չուր՝ սպառս ի խալալ և ի գեղզէ յամենայն հասուց...⁷⁴: Փաստորեն այստեղ էլ խալէն (հիշար՝ խալա-ն) այդու է վերաբերում և ոչ երբևէ ջրին, ինչպես, հավանաբար, թվացել է հեղինակին: Հիշյալ ըննարկումից պարզ է արդեն, որ կոչի վրացերեն արձանագրությունը դպալ-ն բոլորովին այլ բովանդակություն է վկայում: Երանում պարզապարզ սոված է «...վարի լահայսահմանի միայն գրենց դպալից է պահանջված կոչեցի մարդը: Ենդրի արձար-ծումը շատ կհնչուանար, եթև ենթագրիները, թե խալա-ն ու պալանը (խալանը) նույն հարկն են, ինչպես կարծել է Քազ. Ավագյանը, խալա բառը խալանի (նույն՝ դպալն) աղճատված ձև համարելով⁷⁵: Հ. Անտոյանը բնութայն է այս ստուգարանական նույնացումը⁷⁶, Սա. Մալխասյանը՝ հարցականով⁷⁷: Իրականում նման ստուգարանական նույնություն չկա. խալա-ն (վրց ճալա)

⁷¹ «Գրիտան», I, 48:
⁷² «Վիճական այբուբեն», էջ 110-111:
⁷³ Մ. Օրբելու, նշվ. աշխ., էջ 38-39:
⁷⁴ Մեր համոզված չենք, թե Ս. Հակոբյանի վկայությունը (նշվ. աշխ., էջ 420) նորավերջի 1296 թ. արձանագրության («...պատ յամեն աշխարհական հարկից՝ ի գեղանե, ի խալանէ և յամեն յարե...» (տե՛ս, Գրիտան, III, 216) ի խալալե-ն խալէ պիտի հասկանալ (արար. ձև է) և ոչ դպալն (պարսկ. ճալ):
⁷⁵ նշվ. աշխ., էջ 420:
⁷⁶ «Գրիտան», I, 48:
⁷⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 395:
⁷⁸ Տե՛ս Հ. Անտոյան, Հայերեն արձատիան բառարան, հատ. Գ, Երևան, 1930, էջ 317-318:

⁷⁹ Տե՛ս Սա. Մալխասյանը, Հայ. բաց. բառարան, II, 228: Այս երկու հեղինակների մոտ խալայի անկայությունը վերադի է Ա. Տանինի ուղադրությունից, ուստի կարծել է, թե բաց հայերեն բառարաններում գրանցված չէ (նշվ. աշխ., էջ 13, ծան. 11): Խալայ-խալէ-ն գիմորզ հոդով հայտնաբերությունը Քազ. Ավագյանը նրանում համեմատում է ծառ-ծառն, փխտ-փխտն փոփոխությունների հետ (նշվ. աշխ., էջ 395, ծան. 122): Ես և միևնույն պահով տերմիններ (տե՛ս Ս. Ավագյան, նշվ. աշխ.): Ճ-Վ-Պ-Ջ-Վ-Ս նույնացումն փորձ կատարել է գեղ. Ե. Չարիբաշիկյանը (անցյալ դարի կեսերին (տե՛ս նրա՝ «Վերմոզու կանոնակարգի փայլագրում», տե՛ս, 1961, թջ. 418):

զայն է արարեբնից— شـلاغ (հոգն. غلات կամ غلال)⁶⁶, որ նշանակում է արդյունք, հավառում, եկամուտ, հունձ, բերք, հատիկ, հացահատիկ, մինչև խալաթը (զայանք) ուլաթերեբնում վիայված գալաթ-ն է (այստեղից էլ անցել է պարսկերենին— سلاطه ու արաբումսում դուել մոնղղական շրջանում) և նշանակում է «калан, основной налог (преимущественно натурой) с земледельческого населения в пользу государства»⁶⁷, Տերմինս երկու անգամ հիշատակվում է Ռաշիդ-ալ-դիհի մոտ, ինչպես նաև Անիի հիշյալ պարսկերեն արձանագրության մեջ⁶⁸, բայց դա արդեն մանրուրական շրջան է, մինչև Կոչի արձանագրությունը նախամոնղղական վավերագիր է, 1213—1218 թվականներին զրաված⁶⁹: Այնպես որ խալաթ-ն խալաթ-ի և վերջինս էլ բավ-ի հետ նույնացնելը ճիշտ չէ, ոչ էլ նրա՝ ապրանքից մինչև վաճառելը կամ իրացումը անվող ակցից համարելը⁷⁰: Կոչեցիներին «մարի հանդատանանի ցորենը» գինու կամ այգեպուրչի պես վաճառելիք չէր: Մնում է եզրակացնել, որ 13-րդ դարի հայ-վրացական իրականության մեջ խալաթ-ն ունեցել է ավելի լայն կիրառություն, քան այդ հայտնի էր այլ աղբյուրներից, գանձվել է ոչ միայն այգուց, պտղից, գինուց և այլն, այլ նաև՝ ցորենից իրրև բնահարկ: Կոչի արձանագրությունը հիշյալ բովանդակությունը վիայելու ասպին հայտնի աղբյուրն է մեզանում, որանով իսկ խիստ նշանակալի՝ վիճապետան ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրման տեսակետից:

Կոչի նույն եկեղեցու պատին պահպանվել է նաև երկրորդ վրացերեն արձանագրություն, որի գոյությունը այստեղ այցելած գիտնականները չեն նկատել⁷¹: Այն ներկադիր է (զեպագիր) և շրջանակում է հարավային մուտքի բարավորի պակի, մասամբ հիշեցնելով Անիում Հունկեցի եկեղեցու՝ սաղմոսից բաղված ներկազիր արձանագրությունը (Ազ. Վ. 2, 3): Ժամանակին, զույցի եկեղեցու հիմնարկումից շատ շանցած, այստեղ հարակից փոքր

կառույցներ են արվել՝ մեկը հարավային դռան առջ իբրև մուտք-զավիթ, մյուսը՝ արևելյան միակ խորանից հյուսիս՝ որմնափոր դուռ բացելով: Հետագայում այդ հարակից կառույցները բանվիլ են, ուստի մեզ հետաքրքրող արձանագրությունը հայտնվել է բաց տեղում և խիստ ներկաթվիկ-խոնարհելու Ալվոմ ընթերցելի են միջամտաբ՝ սիր քանի բառեր կամ բառահամարաններ միայն, որոնք, անուամենայնիվ, նշանակալի են. լավ պահպանված [...] ցցցցց-ի սկզբի վերականգնումը դժվարությամբ էլ ներկայացնում՝ պիտի լինի [ա՛ղվ(ս) ցցցցց — կառուցեցի: Նրան նախորդող բառի ներկաշեռքի շեռքերով վերածանկ է թճ տառաշարը, որ օղցցցցցց-ի թեյալգրանբով լրիվ իմաստավորվում է՝ պատմողական հույժի ցուցիչն է— ԹճԵ. Գումարիով հաջորդ պահպանված ընցտօնց և ց՝...]⁷² բառն ու շարկադր, կունենանք

[...]թ(ս)ճ [աղվ(ս)ցցցցց ցվղ] ց(ո)տօնց և ց [...]
 Այ II (26) Ազ. Վ. 2, 3
 Թարգմանություն. [...] և կառուցեցի երբ այս և...

Գրության տեղը (մուտքի պակ) և ընթերցվող մասի բովանդակությունը հուշում են, որ արձանագրությունը շինարարական է եղել: Նախորդ արձանագրի ուսումնասիրությունից պարզեցինք, թե վիճաբլվել է Զարաթիայի մահից հետո և Իվանիի՝ աթաբեկ զանալուց առաջ, 1214—1218 թվականներին: Ուրեմն, եկեղեցու կառուցումը տեղի է ունեցել մինչև այդ արտոնագրի հրատարակումը, բայց ոչ 1199—1200 թվականներից վաղ, երբ Զարաթյանները ապստամբեցին զավար: Շինարարական արձանագրության վրացերեն լինելը արդեն լիովին սպացույց է, որ կառուցողը Իվանին է (զույցի նորից կնոջ հետ), իսկ վերջինս այս տիրույթներն ստացավ եղբոր մահից հետո՝ իրրև Շահնշահի խնամակալ-հորեղբայր Ուրեմն՝ եկեղեցու կառուցման ժամանակ ևս Զարաթիայի մահից հետո պիտի հաշվել նույն 1214—1218 թվականների միջև⁷³: Գառելով արևելյան խորանում մեկ լուսամուտ ունենալու և շրջապատի տապանագրերում վրացերեն զրավմբների բացակայության փաստից, կարելի է հետևեցնել, թե կառույցն միաբնակ հաստատություն է եղել, թեև ճարտարապետական ինչ-ինչ նորամուտությունների հետքեր կան: Իվ, հիբալի, Իվանեն Արագածոտնում զավանակահ համախոհները չէր կարողանա փնտրել, կոչեցիները «միամտոր նորա» չէին: Մոռանալու չէ և մեկ այլ պարագա. Կոչում եկեղեցուց փոքր-ինչ հյուսիս-արևմուտք գտնվում է մասենագրությունից լավ հայտնի Կոչավանքը՝ ս. Սահիախոս մենաստանը,

⁶⁶ Ընդհանուր հարկային անբմեր ծառեթ է փրց բառարանագիր Ս. Ս. Օրբելյանին (ա՛ն՝ նրա՝ տեղեցական, տ.՛, 1966, ց. 1V, 2, ց. 246), իսկ Գ. Զարաթիայիցին (կամ նրա խորագիր Մ. Քոստե) գրան և բառեր արարերն լինիլը— Ընց (ա՛ն՝ նրա՝ կազելգու բառարան է 524):

⁶⁷ ՏԿ՝ «Древнетюркский словарь», 7I-а, 1969, էջ 416: Ուլաթերեբնում այդ բառից կազմված են՝ qalan-kes, qalanči, qalanıs. Մ. Նեֆիտին և Կիրիակոս Գան՝ Բակուրյան լեզուի, մի տեսակ հարկ, որ Շիրվանում են վերցնում (فهرست نقیسی 1743 ց. 173) ևս արարերենի հետ չի կապում նաև պարս. Ընց, որից շատ բառարարություններ կան:

⁶⁸ ՏԿ՝ В. Бартольд. Персидская надпись на стене мечти Мануче, էջ 30—32:

⁶⁹ «Երանան անբմեր ցործաված է Գրեգոր Անկեղցու (երեք անգամ) և Կիրիակոս Գան՝ Բակուրյան երկրում, բայց հարկապակի և փեսապետարյան իմաստով (հմմտ. «История монголов внока Магакин», СПб., 1871, էջ 12 և 75), Բառս երկու անգամ էլ ՎՋրաց մասնահարություն մեջ է պատահում (ց. Ս., II, 235, 272):

⁷⁰ Թագ. Ավգուրեգյան, նշվ. աշխ., էջ 395:

⁷¹ Վերսում արդեն նշեցինք, որ համարում եկել արձանագրության մասին խոսելիս, 2. Օրբելյան իրրև երկրորդ անանին միավոր է ընդունել Իվանին ու եղբայր արձանագրի փո-

րագրից վերջամբ տեքստից դուրս մնացած և այդ կողմն վիճաբլված հատվածը, որ մեկը միաբանեցինք բնագիր:

⁷² Սարելի է տարր բառապատկաններ առաջաբեկ ըն(ց)ց(ո)տօնց և ց (այսպես և), ըն(ց)ց(ո)տօնց և (այսպես) և ըն(ց) ցտօնց և ց(երբ այս և): Նախորդակներ համարում վերջինս Մխամանակ չենք կարծում, թե գրության շրջանում ընց ցուցականը նոր վրացերենի նորեմով կարող էր չի կարգապղել:

⁷³ Այն փոքր կառույց է, և շինարարությունը հեշտությամբ կավարտվեր 1—2 արում:

որի միարանկերից էր Զարբյանների գալուստը երազող և որմնափակ խաչքարի արձանագրությունը այն ավետոց Պետրոս Ականատես վարդապետը: 1172 թվականին այստեղ է գրվել Եղիշեի Պատմության, այժմ բանասիրությանը բաց հայանի, ձեռագիրը (Մատենազարան, ձեռ. № 1890), Գալիթ գրչի ձեռքով, որ հիշատակագրել է. «գրեցի զստի վանս Կոշա, ընդ հովանեա սրբոյ Ստեփաննոսի, ի մէջ սիրելի եղբայրսեանց»⁷⁴: Իվանէն զանց շէջ ասնի այդ հեղինակավոր «եղբայրության» (իմա՛ միարանություն) գոյությունը, մանավանդ որ իր կառուցած եկեղեցուց մի բանի մետք ներքև, այժմյան ս. Գևորգ եկեղեցու տեղում, նշանավոր սրբարան կար՛ ս. Գևորգի, ինչ Գևորգ Մարգարետունու (այժմ այդպես է մեկնարանվում) նշխարների մասնացուցումով: Այս ամենը, ինչ խոսք, նկատի պիտի ունենար Իվանէն՝ նոր ազոթարան կառուցելիս:

Զարբյան ասն շատավիզները հարյուրամյակից ավելի տիրեցին Կոշին ու զավտին՝ ստատրելով անդին գրիչների մշակութային գործունեությունը: 1333 թ. «ի սուրբ ուխտս Կոշայ» գրված ճաշոցի գրիչ: Հախորք արևշատություն է մաղթում Արագածունի վաճառ իշխանին՝ «սրբոյ Մեծին Իւանէիս (իմա՛ Իվանէ Բ), «զոր ևւ էր Յիսուս պահեսցէ զսա խաղաղական կենօք և կրկար ժամանակօք՝ ամենայն հեծնադօրօքն իւրովը, փառաց ի փառս բարձրանալով, և զարացուցէ զսուր եռա ի վերայ քչնամեաց իւրաց»⁷⁵:

⁷⁴ Գ. Լավսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1950, էջ 412:
⁷⁵ Գ. Լավսեփյան, Խաղաղականք կամ Պոռչյանք Հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1925, էջ 21, ժառ.:

Թ Ե Ժ Ա Ռ Ո Ւ Յ Բ

Ժամանակակից Մեղրաձոր գյուղից ոչ հեռու (հնագույն անունը՝ Թեժառույժ, որ օտարազգիների կողմից ազավազվել ու դարձել է Թաշա-րուխ), բարձունքի վրա կա մի եկեղեցի, որը մերթ կոչվել է Գյուրջիբլիթա (վրաց եկեղեցի), Փետաժայի եկեղեցի, ներքեմ էլ Թովս մանուկ կամ հուշիակ՝ Պղնձահաճի: Նրա անդրանիկ կերպարությունը կատարել է Հ. Եանճաթունյանը. «Շեխի յեկեղեցեացն Կենտուաց ընդ արձնական հիւսիս ասելի բան զմի ժամ՝ հանդէպ Թաշարուխի զեղջ, ի հարաւակողմն զետակին՝ ի հիւսիսային լանջի անդ անտառախիտ առաջարին ի տափարակ դիրս է եկեղեցի բարձրակամար և անսին օրոցաձև, կառուցեալ միջակ մեծութեամբ, որ հետախոյզ եղեալ մեր՛ շրտաք զարժանաւոր գրուած ինչ հայացքի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցույն արտաբուստ յստորե բան զբուխն ասնեաց տեսանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկեղեցեան վրացի տափք, ունէր տաճարն շուրջ դիրե զաւերակա բտակուտի պարսպի և առ նովա սննեկաց թաղեալ ի մացառուտս և ի թուփս, ուտի և եղեալ է յառաջացոյն մեծաստան՝ թերևս յիշխանութեան վրաց ի ժամանակա Զարբրիա մեծանուն սպասադարի հայազգոյ: Աստի ի վեր անդր ի ձորամիջի, ուր փոքր ինչ հողի յարեմուտս, է Պղնձահաճին, որ այժմ կա անգործ, և առ նովա տերակը շինուածոց՝ թերևս գործաւորաց նորին»¹: Սույն անդեկանքը տասնամյակներ անց կրկնված ենք գտնում Ղ. Ալիշանի «Այրարատում», որը լրացումներով՝ կարևոր է դիտել, որ Ղ. Ալիշանը հրապարակել է «Կիրճի գիլիսէի» հաստակագրիժն ու հարավային ճակատի չափագրությունը՝ Այս վերջինից կարելի է հավատարմաւ, որ 90-ական թվականներին, երբ հուշարձանը չափազորում

¹ Յովանէն Լպո. Եանխարունեաց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ ցատուաց Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 200—201:
² Վենեակի, 1890, էջ 255—259: Այսպես, Հ. Եանճաթունյանցի անգլիկոսյանք Թաշա-րուխ գյուղը ունեցել է 44 տուն (Նշվ. աշխ., էջ 203), իսկ Ղ. Ալիշանի մոտ՝ շուրջ 50 (Նշվ. աշխ., էջ 279):
³ Նշվ. աշխ., էջ 276—279:

էր, հարավային պատի արձանագրությունը կրող երկու շարքերից միայն մեկ բար է ընկած եղել (առաջին շարքի 6-րդ բարը):

Եկեղեցու հաչորդ և ավիլի հանգամանակից նկարագրությունը պատկանում է Ե. Լալայանի: Նա փորք-ինչ մանրամասն էլ է եկեղեցու ներքին ու արտաքին տեսքի նկարագրությունը և կատարել րոշ լրացումներ: Նախորձ Հնդիկաների մոտ խոսք չկա արհնչում ճակատի մասին, մինչդեռ Ե. Լալայանը գիտել է, որ «Երեկոյան ճակատին կա մի երկար և նեղ պատուհան, որի վերև երկու բարձրարանգակ աջաձիթ, կողքերին մի-մի առդաս: Փորք-ինչ ներքև վրաց խուցուրի տառերով մի եղովմած արձանագրություն» և սպա՝ «Տաճարի մեջ կան մի քանի գերեզմանաքարեր, որ նիցից երկուսի վրա կան խուցուրի տառերով ապականադրոներ»⁴:

Անցյալ դարի վերջերին կամ 20-րդ դարի սկզբներին Քեթաույր է այցելել և վերծանություն կործարել Հին վրացերենին ու զրուսկյան ու լավաճանոթ ինչ ու մեկը (նրա «վերծանությունը» պատկանել է ՎՄՍԷ ԳԱ և, Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի S-3863 ձեռագրում): Այդ փորձը, սակայն, այսօր որևէ նպաստ չի բերում՝ զիմ ընկած բարերի վրա լինելիքը վերականգնելու նիվադրելի է, թե ձեռագրում պահպանվածը առնչություն ունենա Մ. Սմբատյանցի՝ տեղում 1895 թ. կատարած ընգործիչակության հետ, որ նա փորձում էր կարգալ Սվեթոխցիովիլիի սպասավորների օգնությամբ՝:

1920-ական թվականներից Քեթաույրի վրացերեն արձանագրություններն ու եկեղեցու հետ կապված հարցերը սկսում են զբաղեցնել հանգուցյալ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկին: Տակավին 1925 թ. (14/12) նա «Պղնձաճանք վանքի տեղագրության հարցի շուրջ» թեմայով գեկուցում է կարդացել Կովկասի պատմության և հնագիտության ինստիտուտում, իսկ մի քանի տարի անց ծանոթություն հրատարակել, ըստ որի «այս վանքի մասին մասնավոր հոգովանք են պատրաստվում պրոֆ. Ա. Շանիձեի և մեր կողմից»⁵: 1936 թվականին տպագրվեցին նրա նախնական կոաճումներն ու զրուսկները այս եկեղեցու վերաբերյալ՝ Պղնձաճանքի մասին պատմիչների հարողած տեղեկությունները վկայակոչելուց հետո, որոնց նշանակալի մասը այս վերագրում է «Բշնիի Պղնձաճանքին» (իմա՝ Քեթաույրին), Լ. Մելիքսեթ-Քեկը գրում է. «Բշնիի Պղնձաճանքի վրացերեն արձանագրությունների այն լուսանկարները, որ մեր տրամագրության տակ են, տալիս են մեզ որոշ հիմք արտահայտվելու, որ այն ոչ միայն բաղիկոնիկ վանք է եղել, այլև, իր օք,

⁴ Կ. Լալայան, նոր-Քաջգետի գուտա (եկգ. հանդես, գիրք 24, 1913, N 1, էջ 60): Ֆալօր, այցելության ժամանակ, Ե. Լալայանի իսկ խոսքով, բառատվի շուրջ թույլ ավելջ լավ լուսանկարկուտ:

⁵ Ձեռագրի նկարագրությունը ան'ս յնաճուղը ելունիցրտա՝ զըրիճուլոճա՝. Տ.—Մ., տծ., 1967, ցց. 285, 286ա. Մ. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարունի ծովադարը գուտափ... Վաղ., 1895, էջ 366—369.

⁶ Լուրն ձեռնոցիտ ձեռք, «Խնդուլու ննաճուտ ևոնիկուտ Յովղըճաճ» ևճ Լուտ յոնոնա, ևոնից-լոնոցըլուտա լոնոցըլոնոն ևլոնոցըլոնա լոնոցըլոնոն, ցց., 1928, ցց 58—59, Միջ. Տ:

⁷ Լ. Մելիքսեթ-Քեկ, վրաց աղբյուրների Հայաստանի և հայերի մասին, Բ, Սրեան, 1936, էջ 64—69:

Պարսիայի և Ավագի շրջանի կառուցվածք⁸: Ազա Ղ. Ալիշանի, Ե. Լալայանի և այլոց նկարագրությունները բերելուց հետո, նա այսպես է ամփոփում իր ծանոթագրությունը. «Բայց և այնպես, այս մանրամասն նկարագրությունն էլ, որտեղ վերևում առածի հետ, միանգամայն բավական է, որպեսզի Քաջաուրի (քառ Ալիշանի՝ Ռեստմայի) եկեղեցին մենք բաղիկոնիկ գավանության հուշարձան ընդունենք, որը հնարավորություն է տալիս Միսրպրճեներ Շովհանի (Սվանի) և նրա որդի Ավագի անվան հետ կապել ինչպես Չորագետի Պղնձաճանքն, այդինքն այժմյան Ախտատի, նույնպես և թեյի Պղնձաճանքն, այդինքն այժմյան Քաջաուրի (Ռեստմայի) եկեղեցիները: Հարցը միմիայն այն է, թե երկուսից ո՞րն է իսկական Շովհանի (Սվանի) և Ավագի գերեզմանների տեղը: Քաջաուրի վրացերեն արձանագրությունները դեռևս կարոտ են ստույգման, որ մենք մտադիր ենք անհայտոր կատարածի, սպա և արձանագրությունները հրատարակել մեր աշխատության մեջ՝ «վրացերեն արձանագրությունները Հայաստանում»⁹:

Գիտելու է, որ այս սողելը գրիչիս Լ. Մելիքսեթ-Քեկը զեռ չէր վերձանել Քեթաույրի արձանագրությունը, այլայպես նրա բովանդակության իմացությունը հասակություն կմտցներ վկայակոչված զրուսկների մեջ, զոն չէր ստի, թե «Ջաքարիայի ու Ավագի շրջանի կառուցվածք» է, քանի որ նրանք փաստորեն ժամանակակիցներ չեն, իսկ արձանագրության մեջ արդեն ասված է, թե ով է կառուցել: Հայանի է, սակայն, որ դիտանկարը 60-ական թվականներին ևս այցելել է հիշյալ վանքը՝ անշուշտ խոստացած ստույգումն ու հրատարակումը քի կատարածելուս համար: Փե ինչ արդյունքի հասավ շուրջ 40 տարի այս արձանագրության վերծանությանն ու մեկնաբանությանը հետամուտ գիտնականը՝ չդիտենք¹⁰:

Այսպիսին է Քեթաույրի շուրջը եղած դիտական հետաքրքրության համառոտ պատմությունը: Այս ու աշխուղ կան ուրիշ հիշատակություններ և, որոնք եղածի վրա որևէ բան չեն ավելացնում, ուստի և անհրաժեշտ չեն համարում զրանց անդադառնալ¹¹: Փաստական իրողությունն այն է, որ առ այսօր Քեթաույրի արձանագրությունները մնում են վիերձանված կամ լրատպարակված:

Գլխավոր արձանագրությունը, ինչպես ասվեց, վիերձարված է եկեղեցու հարավային պատին, բիմին հարող երկու շարքում, պատի ողջ երկարությամբ: Առաջին շարքում գեռեղված է մեկ, երկրորդում՝ երկու սող: Վերևում արդեն

⁸ Լ. Մելիքսեթ-Քեկ, եղվ. աշխ., էջ 68:

⁹ Եղվ. աշխ., էջ 69:

¹⁰ 1963 թ. ընդոտներին, նրբ սկզգ. Ա. Շանիձեի Քրիթիի համալարանում հրատեղի խոսք էր առած անձամանակ վառանված պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի հիշատակին, նկատեց, թե իրենք (Ա. Շանիձեի և Լ. Մելիքսեթ-Քեկը) մտադիր կն հրատարակել Քաջաուրի արձանագրությունը:

¹¹ Նկատի ունենք՝ Յ. Տաշևան, Մատնագրական մանր ուսումնասիրությունը, 1, Վիեննա, 1895, էջ 30, 2. Ուղեյակի մոտ (Վերջայի վանքերը, Վիեննա, 1953, էջ 244—245) Պղնձաճանքի ս. Աստուծածախ վանքը չիսովմած է Մաթուավանքի հետ, ուստի յրեք հրատարական բերված է Հորգոտանի մեջ ձանոթ արձանագրությունը՝ Վճամաև ստույգում ևս Չորագետնա շինեցի գեկեղեցիս ի բվ. ՈՂ...ս, այն բաղիկ Վերձանեցից (1888 թ., էջ 363, խա 101):

է terminus ad quem-ին, այս ևս կհետաքննէ և Իվանի հաղորդած տեղեկութիւնը իր գրաված երկրների մասին: Նրա առաջխաղացումը հարավ հասել է մինչև Կեշառեցիների երկրից կամ սահմանը, իսկ այդ նշանակում է, թէ նա զեռ չի հասել Գեղարքունիք, Արարտայան գոշառավայր և այսպէ՛ Անի, այսպէս զրանք թվարկումից զուր շէին մնա կամ իբրև հարավային սահման կ'հշշառակակէին: Այդ նշանակում է, որ արձանագրութիւնը վիճարկւել է Անիի գրավումից ոչ ոչ, որինմ' մինչև 1199 թվականը: Իհարկե, Հաբարչյան ստան նվաճումների տարեգրութիւնն և տեղագրութիւնն մենագրական ազգայն ուսումնասիրութիւնը առավել ճշգրտութիւն կարող է մտցնել այս խնդրում, բայց 1196—1199 թվականների միջոցին գրված լինելու փաստն ինքնին զոհանցնում է արձանագրութիւնն բրնձիկոն որոշելու մեր մտահոգութիւնը: Այստեղից բխում է մի կարևոր եզրակացութիւն. Իվանի քաղեկոնական դառնալը տեղի է ունեցել մինչ այդ, որովհետև Թեմաուցիի նրա կառուցած եկեղեցին կրում է այդ զավանթիւնը բնորոշ կառուցվածքային տարրեր: Մինչև այժմ էլ կապու էր ծառայում 1205 թ. ուշացումով Անիի ժողով ներկայացած Մխ. Գոշի գիւմումը, թէ ս'ուր հոգայք վասն ազգիս, զի մի այդպիսի սովորութեամբ խառնեցին ընդ վիրս, և ես հոգամ վասն զօրավարիս, զի մի լիցի սա վրացի, իրև զեղբայր իւր, որում սպասեն վրիւ...»¹⁶: Ինչպես երևում է, հիշյալ զավանթափոխութիւնը բավական վաղ է տեղի ունեցել, զեռ նրա՝ մասխորթութեանցնայան շրջանում:

Վերագտնայով արձանագրութիւնն սկսվածքին՝ «արտրիշ, որդ կար Գոգրթա՝ մեղ փրկելու համար, քո խաչափայտով հանգրծն նեղյալներիս», պիտի նկատենք, որ այն թեկադրված է Սաւա՛հաղիի կողմից նրտապղծող գրավելու փաստով (1187 թ.), սչրում յաղթեցան քրիստոնէայրն և անչայտ եղև սուր խաչն»¹⁷ կամ, Մխ. Գոշի արտահայտութեամբ, «զերի վարեցաւ նշանն սուրը հանգրծն թագաւորաւ և բազում զարարաք»¹⁸: Քրիստոնէյա շատ այլ երկրների նման մեղանում էլ հավատացած եև եղել, թէ խաչադրաց արշավանքները «սիրող զերկզմանքս», «նեղյալներին» ու «խաչափայտըս փրկելու համար եև ձեռնարկում, որ ակնարկված ենք գտնում և Իվանի արձանագրութիւնն մեջ: Երկու տասնամյակ անց, 1223—1224 թվականներին, Իվանն այլևս ոչ թէ ակնարկում, այլ ուղղակի նամակ էր գրում Հռոմի պապին (Ռուստանն թագուհուն պիտուիմք մեր ու նրա հետ միախառնանկ) և Անյունում, որ էս անձամբ պատասաւ եմ սուր վայրերը ազատագրելու զճալ 40 հազար զորակալեով, որ էլ զո՛ւ կամենա՞» և պատասխան ստանում, թէ «այնպէս

պատրաստվիր քո ողջ զորով, ինչպէս պատշաճ է մեծութեանդ»¹⁹: Արդ, խաչակրութիւնն հանդէպ Իվանի, և առ՝ասարակ վրաց թագավորութիւնն ցուցարեւած հետաքրքրութիւնն ու շահագրգռութիւնը արդյունք էր ինչպէս երկրի ուղղմական կարգութիւնն, այնպէս էլ արտաքին քաղաքական հարաբերութիւնների լայն ծավալի:

Թեմաուցիի եկեղեցու նույն հարավային պատի վերինից 5-րդ շարքում, մտաքի (գավթի) արեւելյան պատի բարձրութիւնն ուղղութեամբ կա պատկան շրջանակ ունեցող մի բար, որ շինութիւնն ընթացում իսկ նախատեսված է եղել արձանագրութիւնն համար: Թեև տասերը մասամբ հողմահանարված է, այնուամենայնիվ, ոչ մեծ արձանագրութիւն լինելու պատճառով կարգացելով է.

Ճ(ՌՆԸ)Յ, Յ(ՇԵԳԵՄԸ)Ն
Ե(ՇՂ)ԸՈ յ(ՌՌՈՅ)ՆԵՈ.

Յ II (28)

Ադ. VII, 1

Քարգմանութիւն. Քրիստոս, ողբումս՝ Կյուրիկի (-Կիրակոսի)

հոգուն:
Այստեղ, հարկով, անձնանվան բացման մեջ պայմանականութիւն կա. յի հապովման կարող էր ենթարկվել Ա՛ յՕՐՈՅՅ-ն, Ա՛ յՕՐՈՂԵ-ն, Ա՛ մեկ այլ անուն, որ լրացուցել այդպիսի շտապութիւնն պատճառով անկարելի է ճշտել: Արձանագրութիւնն տեղագրութիւնը և նրա համար նախապէս տեղ հոգալը հիմք է ապին կարծելու, թէ այն վերաբերում է կառուցող վարպետին, ավելի ճիշտ՝ ճարտարապետին, մանավանդ որ Հաբարչյան զեղապատնում նման անուն կրող անձնագրութիւնն չկար, իսկ վանհայր կամ մեկ ուրիշ հոդեղական զմիւր է ենթադրել. այդպիսիք ունենալու համար եկեղեցին արդեն կառուցված պէտք է լիներ, մինչդեռ, կրկնում ենք, ներկա արձանագրութիւնն զոյալութիւնը հոգացել է տակաւին շինարարութիւնն ընթացում: Թէ ով է եղել այս Կիրիկն (Կիրակոս) կամ Կիրիկն (Կյուրեղ) կառուցողը, սրբիշ ի՛նչ հիշատակարաններ ու կառուցներ է թողել՝ ոչինչ չգիտենք, նրա անունը այս շրջանի աղբյուրներում առաջին անգամ է հիշատակվում, Եթև

¹⁶ «Տե՛ս Տ. Սամաթացուց, ունճորոս ցատուլույնմնն յնորոցլուս Մուտիւ... ՅՅ. Գ. քնոգիրք՝ էջ 564—667: Ի զիս, ուշագրով է այն իրողութիւնը, որ Իվանն իր նամակում անհրաժեշտ է նկատում արել թէ ի՞նչ կարողորդի հանչել (հանչար)՝ 15 մեծ քաղաքների անը, համեա-տարեն զոյի է խոնարհում մեր առաջ և մեր օրհնութիւնը խնդում: Պարզ 1224 թ. մայիսի 12-ին զրա՛ս պատասխանում հղում է իր օրհնութիւնը (անց, էջ 9 և 12): Այս ամենից կարելի է եզրակացնել, թէ Իվանն շահագրգռված էր արտաքին հարաբերութիւնների դրոշմով ճանաչելի գարննել կրիտասարց կարողորդու անց ու զերը: Տասնամյակներ հետո (1255 թ.) Անիում (շտանհինգ մեծ քաղաքներէջս ամենամեծում) Տահշահի ու նրա ընտանիքի անգա-ներին հետ քրոջուց հետո, Ուլջամ Քարուրը գրում է «Նրանք ինձ ստացին, թէ ինքն հողմիական եկեղեցու զավանքն էին և կէն պողոք մի քչի օրհնութիւնն ուշադրի ինքն, նրանք արցնց բոլոր սրբերն պիտի նկարակեն եկեղեցուս (սո՛ւս Լովի. Հակոբյան, Ուղղութիւնն-ներ, հատ. Ա. երեսն, 1932, էջ 26):»

¹⁶ Կ. Գանձակցի, էջ 177: Իվանի զավանթափոխութիւնը անհնգրտութիւնն էր առաջա-րկ է Կիրիկոսում: 1204 թվականին Հաբարչյան ծխաղագմանական մի քանի հարցերով գրում է Հովհաննէս կաթողիկոսին և Անի թագավորին: Նորոշում կաթողիկոսը շտապում է Ասում ժողովը հրամարել՝ Հաբարչյանը պատասխանելու համար՝ զսի մի կիջ եւս ստաուոյ ուղղաթառ ետաուոյև, որպէս կըրաք իւր: ¹⁷ Մանր ժամանակագրութիւններ, II, 60, նմամ, էջ 83, ծան. 91: ¹⁸ Մ. Մ. Մուրադյան, К хронологии некоегох событий в Грузии и Армении (Երևան-իւր Մատենագրարան, X 9, էջ 130—131):

հաշիկ շառնեք Պղնձահանքում պահպանված մի տապանագիր, որ, սակայն, գրված է ընդ և ու՛ մը՝ մը.

Քեժառույթի պաշտամունքային կառույցն ունի երկրորդ գոտերոյ խոշոր արձանագրութիւն՝ փորագրված արեւելյան ճակատին: Այն սկսվում է պատի հարաշուշյան եզրից և շարունակվում ամբողջ երկայնքով, պատահանի հաստվածում բարձրանում նախորդ շարքը, իսկ այդ նորից իջնում է եր տեղն ու հասնում հյուսիսային եզրը: Արձանագրութեան շտեղծվորված ավարտամասը երկատիղի տեսքով զետեղված է այ թևի տակի շարքում: Պատկերով գրութեան հնագրական նկարագրից, կարելի է վստահանալ, թե այս արձանագրութիւնը ևս շինարարութեանը ժամանակակից է: Ի դեպ, այն ևս փորագրված է մեծագիր տառերով, բառանշատման նույն երկինք նշանով, առանիշերի ոչ ակնկալելի համաչափութեամբ: Ափսոսանքով պիտի նշել, որ վիճակի շուրջ կեսը հողմահարված է, և մեծ զծվարութեամբ ու բազմակի փորձերից հետո միայն հաջողվեց վերծանել նրա մի մասի բովանդակությունը: Միջամասի հատվածը այլևս մնալու է անհայտության մեջ, որովհետև այն հիմնովին հողմահարվել-վերացել է: Այլ կիսի ընթերցումը մասամբ բարդանում է որչ կտագրերի անկալութեամբ, որոնց գիմել է փերագրողը՝ ասելիքը տեղավորելու անհրաժեշտութիւնից թեկադրված: Վերծանվող տեքստը այս է.

1. + ւը(ո)ւը(ց)ն լը(մըրտմ)ն ի(շ)լու ը(ո)րտ-մ(ո)րոնա ծըծ(ա)լսո մը[... ..]տ(ց)ն ևս Մ(ը)փյալըց զ(ա)ւը(ո)Յնա (?) ի(շ)լու(ո)ն(ա)տ(ց)ն լը(ց)ւը(ո)նա
2. լը(մրտո)ն(ա)նա, լը(մրտո)նա
3. մ(ո)նա մ(ո)ն(ո)նա.

Ք III (29) Աղ. VII, 2

Քարգմանութիւն. Աստված փառավորի ամիրայից-ամիրա Բուրայի հոգին...ին և ողորմա Պաղիչին (?)՝ հանուն հոգու, Աստվածամօր, նրա աստված-նորու:

4) Եկեղեցու ներքում կան տապանաքարեր, որոնցից հինգի վրա պահպանվել են վրացերեն արձանագրութիւններ, նույն շարքում:

ա) ի(շ)լուս | սնն մ(ո)լուսն(ա) Մ(ը)լը(ն)ն լը(մըրտմ)ն
Ք IV (30) Աղ. VIII, 1

Քարգմանութիւն. [2]սանն Բուրայի հոգուն ողորմի աստված:

բ) Նախորդի աջ կողքին, տապանագիր ներկայացնող բարձր ձևով է վերին նախից գծին՝ մի տեսակ դարգամոտիվ ծառայելով: Երկու ծայրերից հողմահարված է: Այժմ կարգազրկում է ռոյնՅ տառախումբը, որ, թերեւ, ընկալվելու է իբրև

[...]րն Մ(ը)փյալըց

